

Ս. ԼՕՐԷԼԻ Ի ՆԱՄԱԿՆԵՐՆ ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆԻՆ

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ

Երեւանի Գրականութեան եւ Արուեստի Պետական Թանգարանում պահ-
ւող Արշակ Չօպանեանի անձնական ֆոնդում գտնուում են վերջինիս ուղղուած
չուեղարնակ լրագրող, գրող, խորհրդային նախկին պետական գործիչ Ս. Լօրէլ-
լիի (Սուրէն Երզնկեան, 1880–1963) 12 նամակները¹:

Սոյն նամակներն առաջին հերթին ուշագրաւ են հայ–չուեղական մշակու-
թային կապերի առնչութեամբ, ինչպէս նաեւ որոշ մանրամասներ են լրացնում
Չօպանեանի գործունէութեան վերաբերեալ: Հիմնականում Լօրէլլիի գրում է
1882–1903 թուականներին Շուեղիայում բնակուած բանասէր Նորայր
Բիւզանդացու, նրա արխիւի փրկման պատմութեան, ժամանակի շուէր հայա-
գէտների մասին, որոնց հետ Փարիզի հայ մտաւորականութեան չիրականաց-
ւած հանդիպում–ընդունելութեանն այնքան նախանձախնդիր է եղել Լօրէլլին:
Այս նամակներից իմանում ենք, որ շուեղարնակ հայ մտաւորականը փորձել է
ուղիներ որոնել՝ Չօպանեանին Նորելեան մրցանակի ներկայացնելու ուղղու-
թեամբ, ինչպէս նաեւ շուէր գրող Լազերկվիստին² հայ քերթութեան շուեղերէն
թարգմանութեան գործին ներգրաւել փորձելու մասին: Լօրէլլիի նամակներում
հայ գրականութեան դասականների մարդկային դիմագիծը փոքրիկ հպումնե-
րով լրացնող վկայութիւններ կան՝ Պերճ Պոռչեանից մինչեւ Եղիշէ Չարենց:
«Լայն» է նաեւ նամակագրի յիշած գործիչների ընդգրկումը (նրա նամակներում
խօսք է գնում թէ՛ Ղազարոս Աղայեանի եւ Ազատ Վշտունու եւ թէ՛ Ժան–Պոլ
Սարտրի եւ Թոմրս էլիըթի մասին): Հետաքրքիր են նաեւ Շուեղիայի թագաւո-
րութեան, նրա հասարակական կացութեան մասին վկայակոչումները, Նո-
րելեան մրցանակի յանձնման առնչուող խնդիրներին վերաբերող տեղեկու-
թիւնները:

Ծնունդով Թիֆլիսեցի Սուրէն Երզնկեան–Լօրէլլին դարակզրից եղել է
Կոմունիստական Կուսակցութեան գործիչ, 1910–1920ական թուականներին
Թիֆլիսում եւ Բաքուում խմբագրել է մի շարք պարբերականներ (Մարտակոչ,
Կարմիր աստղ, Վիշկա եւ այլն), գրադուել հրատարակչական գործունէու-
թեամբ, տպագրել գրական–հրապարակախօսական բնոյթի տասնեակ գրքոյկ-
ներ: 1929–1930 թուականներին եղել է Խորհրդային Միութեան առեւտրական
ներկայացուցիչը Ֆինլանդիայում: 1930ի գարնանը փախել է Ֆինլանդիա՝ խու-
սափելով յետագայ հաշուեյարդարի հեռանկարից: Մինչեւ 1944 թուականն ապ-
րել է Հելսինկիում, շուեղերէն եւ ֆիններէն լեզուներով գրքեր հրատարակել
Կամոյի, Ստալինի եւ Կովկասի ժողովուրդների մասին, Ս. Լօրէլլի եւ Իմամ
Ռազուլա ծածկանուններով: 1938ին Փարիզում լոյս է տեսել Ստալինի կեանքը

Ֆրանսերէն ծաւայուն աշխատութիւնը: 1944ին փախել է Շուեդիա, հաստատուել Ուփսալա քաղաքում: Շուեդիայում հրատարակել է երկու գիրք, գրական-հրապարակախօսական ընդլիժի յօդուածներով աշխատակցել սփիւռքահայ մամուլին (*Մ. Նահանգներ*՝ Պայքար, Երիտասարդ Հայաստան, Լրարեր, Փարիզ՝ Արեւմուտք, Պոլիս՝ Երջանիկ, եւ այլն): Կապեր է ունեցել գաղութահայ մի շարք մտաւորականների հետ: Վախճանուել է Ուփսալայում, իր հարուստ արխիւը կտակել Օսլոյի համալսարանի գրադարանին:

Արշակ Զօպանեանի ֆոնդում պահուող նամակների սեւագրութիւնների մէջ չկան Լօրէլլին յղուած նամակների սեւագրերը: Սակայն Լօրէլլի իւրաքանչիւր նամակից գրեթէ միշտ պարզ է դառնում, թէ նախորդ նամակում ինչ է գրել Զօպանեանը: Դրանք գրուել են 1948–1952 թուականներին, Ուփսալայից: Նամակներում կան մի շարք կրկնութիւններ. առկայ է որոշ երկարարանութիւն, ինչը կարելի է բացատրել որպէս հայութիւնից կտրուած հայ մտաւորականի խօսելու պահանջի դրսեւորում: Ներկայացուող նամակներում կատարել ենք ուղղագրական ընդլիժի ուղղումներ, լեզուական մանր հարմարումներ, անձնանունները, տեղանուններն ու օտարարանութիւնները դարձրել ենք միատարր, իսկ առհասարակ նամակների գրութիւնը, ընդգծումները թողել ենք անփոփոխ:

Ա.

5 Յունիս 1948, Uppsala,
Idunagatan 6

Մեծարգոյ պ. Ա. Զօպանեան
Փարիզ, րիւ Մէյ:

Սիրելի Վարպետ,

1946 թուին, երբ սկսեցի ծանօթանալ պատահամբ միայն կորստից զերծ մնացած նորայրեան անտիպ ձեռագրերի հետ³, ես հանդիպեցի՝ ի միջի այլոց՝ նաեւ Չեր բացիկ-նամակների (դժբախտաբար միայն հատուկտոր մնացորդներ Չեր նամակագրութեան), որ Դուք ուղղած էք 1904–1906 թթ.ին Փարիզից Վենետիկ՝ Նորայր Բիզանդացուն: Այդ նամակագրութիւնը պատում է *Քույակի* շուրջը, որի ստեղծագործութիւնը հետաքրքրել էր այն ժամանակները Չեզ որպէս արուեստագէտ-սյուտի, իսկ Նորայրին՝ որպէս բանաստի: Դեռ այն օրերին ես ուզում էի գրել Չեզ եւ հաղորդել, թէ նորայրեան ձեռագրերի մէջ ժողոված են մօտ *երեք հարիւր* տաղ (եւ անձամբ չեմ ստուգած քիւր, սակայն հաւատում եմ Նորայրի սեփական պնդումին), մի քանի նորայրեան սեւագրութիւնների վարիանտներ եւ մի մաքուր արտագրած օրինակ տաղերի – «տաղարանի»: Պատերազմը նոր էր վերջացել, եւ կտրուած էի Արեւմտեան Եւրոպայից, չգիտէի Չեր հասցէն. – ցանկութիւնս մնաց սոսկ անկատար ցանկութիւն:

Այս օրերիս ստացայ Մելգոնեան Յանձնաժողովի⁴ կողմից նուր չորս գիրք (Ադոնցի⁵, Տէր Ներսիսեանի⁶, Մաքրզեանի⁷ եւ Չեր *Հայրէններու Բուրաստրանը*)⁸ Նուպարեան Մատենադարանի գրադարանապետ պ. Անտոնեանի

նամակով, որի մէջ վերջինս, ի միջի այլոց՝ հաղորդում էր ինձ, թէ գրքերի մի նոյնպիսի *քոլլեքսիոն*¹⁰ ուղարկուած է նաեւ փրոֆ. Հենրիկ Նիպերկին¹⁰: Մի քանի օր առաջ ես գնացել էի տեսութեան վերջինիս, ցանկանալով գրուցել նրա հետ նախքան փրոֆ. Նիպերկի մեկնումը արտասահման եւ Չեզ հետ համադիպումը Փարիզում:

– Դուք, հայերդ, դուք ինչ *արայլէ*¹¹ ձեր սիրալիր ուշադրութեամբ, որին ես արժանի չեմ!, բացազանչեց նա տեսնելով ինձ իր առանձնասենեակ–գրահարանի շենքին, համալսարանի վերնայարկում:

– Դուք եւ Շուետիան արժանի էք աւելիին! – ընդհատեցի ես:

Փրոֆ. Նիպերկը ցոյց տուեց ինձ զանազան տեղերից (անգամ ամերիկահայ հեղինակներից) ստացած գրքերը ու նամակները, մասնաւորապէս Չեր Մելգոնեան [Յանձնաժողովի] հրատարակութիւնները:

– Հետաքրքիր է ինձ իմանալ, թէ ո՞ր գիրքը Մելգոնեան հրատարակութիւններից ամենից աւելի գրաւեց Չեր ուշադրութիւնը? – հետաքրքրուեցի ես:

Ես սպասում էի, թէ նա ինձ կը պատասխանէր *L'Histoire d'Arménie* Ադոնցի, աչքի առաջ ունենալով փրոֆ. Նիպերկի հետաքրքրութիւնը Մերձաւոր Արեւելքով եւ որ գիրքը ֆրանսերէն լեզուով է: Նիպերկը, որ մի աշխուժ եւ եռանդով լի տղամարդ է, վեր թռաւ ու ջոկեց կողքի սեղանի վրայ թափուած գրքերի մէջից Չեր *Հայրեններու Բուրասարանը*, ու նկատեց ինձ սքանչազումով.–

– Մի ամբողջ զանձ! Ես իմ այս տարուան ամառը նուիրելու եմ այս հատորի ուսումնասիրութեանը:

Թէեւ ինձ յայտնի էր վաղուց մեր միջնադարեան բանաստեղծութեան գրական գեղեցկութիւնը, ծանօթ էի մասնաւորապէս ռուս մեծագոյն բանաստեղծների Պրիսուվի, Պալմոնտի, Վիաչեսլաւ–Իւանովի, Սոլոկուայի¹² եւ ուրիշների կարծիքներին՝ մեր միջնադարեան պոետների մասին,– սակայն փրոֆ. Նիպերկի սքանչազումը Չեր գործով ինձ հաճելիօրէն զարմացրեց եւ իմ զարմանքը չխուսափեց նրա տիրող աչքերից:

– Ո՛ր, ես չեմ ուզում ասել, թէ Մելգոնեան միս հրատարակութիւնները հետաքրքիր չեն! Նրանք բոլորն էլ լուրջ արժէքի գրքեր են, սակայն ես իմ այս ամառուան զբաղմունքներիս պաշարը ստացայ! – նկատեց նորից ինձ ու սկսեց սիրով թերթել Չեր *Հայրեններու Բուրասարանը*:

Չեզ, որպէս այդ հատորի հեղինակի, ես չէի կարող այլեւս չգրել փրոֆ. Նիպերկի կարծիք–գնահատականի մասին, գրել այսպէս մանրամասնօրէն, «լուսանկարչօրէն», համոզուած թէ շուէտ ականաւոր գիտնականի մտաւոր որակի մի մարդու գնահատականը եւ պատրաստուածութիւնը իր ամառուան արձակուրդը նուիրել Չեր ժողովածուի ուսումնասիրութեանը գուցէ լաւագոյն բարոյական վարձատրութիւնն է Չեր կէս դարեան յամառ ու դժուարին, տաղանդով կատարուած աշխատանքին՝ մեր միջնադարեան բանաստեղծութեան ամբողջ գեղեցկութիւնը գիտակցել տալու օտարերկրեայ մտաւորականութեան: Մօտերս, թէ առիթ ունենաք հանդիպելու փրոֆ. Նիպերկին Փարիզում եւ մտերմաբար գրուցելու հետը.– ես համոզուած եմ միանգամայն,– կը կրկնապատկուի Չեր հոգեկան բաւականութիւնը, որ Չեր հատորով սքանչազողը Շուետիայի լաւագոյն մտաւորականութեան խոշորագոյն ներկայացու-

ցիչներից մեկն է, որը՝ որպես հայագետ՝ ի վիճակի է բնագրի գեղեցկությունը ճաշակելու անմիջականօրէն:

Գերապատիւ Արտաւազդ արքեպիսկոպոսը¹³ ինձ հաղորդել է, որ Դուք վերապահում եք մի *սիրփրիզ*¹⁴ փրոֆ. Նիպերկին եւ շուտ-սքանտինա գիտնականներին Փարիզում՝ Օրիենթալիստների ու Լինկվիստների¹⁵ համագումարի օրերին: Փրոֆ. Նիպերկը Ուփսալայի համալսարանի ներկայացուցիչն է լինելու արեւելագետների համագումարին, իսկ փրոֆ. Կունար Կունարսոնը սլաւիտ եւ փիլիսոփայութեան (այսինքն Լեթթըր) ֆակուլտետի տուայեը¹⁶ (հայասեր գիտնական)՝ լեզուաբանների համագումարին: Միւս բարձրագոյն դպրոցները՝ Լուսնո, Սթոքհոլմ, Կտոքպորկ- նոյնպէս ունենալու են իրենց ներկայացուցիչները, - եւ փրոֆ. Հեալմար Ֆրիսը¹⁷ նոյնպէս կը գայ:

Շուտացիները առհասարակ եւ շուտ պետութիւնը ազգայնապէս (ազգովին), չափազանց զգայուն են իրենց համբաւին՝ արտասահմանում եւ ամենայնչին ուշադրութիւնը դէպի Շուեդիայի ներկայացուցիչը (դեսպանը-կոնսուլը), դէպի շուտ կուլտուրան ու գիտնականը լայն արձագանգ է գտնում Սթոքհոլմի եւ միւս քաղաքների քերթերում: *Տակէս ճիհեթեր* (օրուայ նորութիւններ) օրաքերթը 250 հազարի տիրած ունի, *Վի* (մենք) շաբաթաքերթը, որի մէջ տպուած էր Գրիգոր Չօրրայի նորավէպի քարգմանութիւնը՝ 800 հազարից արեւելի: Եթէ ինկատի առնենք Շուեդիայի ազգաբնակչութեան քիւը (7 միլիոնից) պակաս, ինկատի առնելով նաեւ Ֆինլանտիայի ծովեզերեայ քաղաքների 300 հազարը), ապա այս փաստը պարզ ապացոյց է մեծ կուլտուրականութեան: Չեր ընդունելութիւնը՝ ի պատիւ շուտ գիտնականների՝ համոզուած եղէք նոյն երեկոն իսկ կը հաղորդուի Փարիզից Սթոքհոլմ եւ Armenien=Հայաստան, Armenier=հայ, Armenisk=հայկական՝ բառերը խոշոր գրերով կը զարդարեն շուտ մամուլի էջերը: Չմոռանաք լուսանկարել տալ Չեր շուտ-հայ բարեկամութեան հաւարոյթը:

Շուտ գիտնականները վերադառնալով տուն ու հաշի տալով իրենց առաքելութեան մասին՝ համալսարաններին (Ուփսալայի համալսարանը 250 դասատու ունի), կը շեշտեն նաեւ հայերի ցուցադրած ուշադրութիւնը դէպի շուտ գիտնականները ու շուտական հայագիտութիւնը:

Չեզ յայտնի է, որ Մովսէս Խորենացու առաջին տպագրութիւնը օտար լեզուով կատարուել է Շուեդիայում: 1697 թուին երիտասարդ համալսարանաւարտ (28 տարեկան) Հենրիկուս Պրեններուսը ուղեկցել է շուտ դեսպան Ֆապրիցիուսին Պարսկաստան - Իսպահան, 1697-98-99 թթ. Նոր Ջուղայում ուսումնասիրել է հայոց լեզուն ու տեղական հայ հոգեւորականութեան օգնութեամբ քարգմանել Խորենացին լատին լեզուով: Վերադարձին (Պարսկաստանից հայրենիք) նա 1700 թ. բանտարկուել է Մոսկուայում եւ մինչեւ 1722 թիւը պահուել գերի՝ ռուս-շուտական պատերազմի պատճառով: 1723 թ. Պրեններուսը հրատարակել է մօտ 24-25 տարի ձեռագիր մնացած իր Նոր Ջուղայի քարգմանութիւնը¹⁸: Այդ 1697-98 թթ. մինչեւ մեր օրերը - 250 տարուայ ընթացքում չէ մարել հայագիտութեան ճրագը Շուեդիայում: Ինձ թում է, թէ Չեր կազմակերպելիք *ընդունելութիւնը*, շուտ-հայկական բարեկամութեան ցոյցին, պետք է տալ *Շուեդիայի հայագիտութեան 250ամեակի* գիտական տօնա-

խմբութեան բնոյթ՝ սնծարելով նաև այսօրուան հայագիտութեան խոշոր դէմքը՝ փրոֆ. Նիպերկը եւ հանգուցեալ հայագետ Էւալտ Լիտենին¹⁹ Կէօքըպորկում փոխարինած փրոֆ. Հեալմար Ֆրիսըրը: 250ամեակի գիտական տօնակատարութեան–ընդունելութեան բնոյթ տալով այդ պատուոյ ցոյցին, փարիզահայութեան երոյթը կը ստանայ նշանակալից երեսոյթ. Շուետիայի մտաւորականութեան եւ շուէտ երկրի համար վերին աստիճանի պատուարեր:

Փրոֆ. Նիպերկը չափազանց յուզուել էր Չեր Նուպարեան Մասեննադարանի փրոֆ. Մէյէի²⁰ յիշատակին նուիրուած ֆրանսերէն պրոշիւրի ընթերցումից: Նա մօտ[իկից] ճանաչել է Մէյէին եւ նրա հանճարի գնահատողներից է: Իմ տպաւորութիւնն է, որ հայերիս ցուցադրած ուշադրութիւնը այնպէս ազդել է փրոֆ. Նիպերկի վրայ, որ նա ցանկութիւն ունի անելի շատ ժամանակ նուիրելու հայերէն պրպտումներին: Յամենայն դէպս, նա պատրաստ է աջակցելու ամէն կերպ հայագիտութեանը՝ Շուետիայում, նոյնիսկ բարեացակամ է Ռուսիայի համալսարանում մի օր– ապագայում – հայերէն լեզուի ու գրականութեան ամբիոնի ստեղծմանը²¹:

Նորայրի ձեռագրերի սեփականատէրը Կէօքըպորկ քաղաքն է, որի քաղ[աքային] վարչութիւնից է կախուած ծախել կամ նուիրել մեր հայկական հիմնարկութեան՝ հայերէն ձեռագրերը: Ինձ բուն է, թէ շատ լաւ կը լինէր, օգտուել շուէտ հայագետ փրոֆեսորների ներկայութիւնից Փարիզում եւ Չեզ կազմել խառն շուէտ–հայկական նորայրեան կոմիտէ, Արտուազդ արքեպ[իսկոպոս]ի պատուաւոր նախագահութեամբ եւ փրոֆ. Նիպերկի նախագահութեամբ եւ Չեր ու փրոֆ. Ֆրիսի անդամակցութեամբ, գուցէ էլի մի կամ երկու փարիզահայ մտաւորականների անդամակցութեամբ (որքան սակաւաթիւ, այնքան լաւ՝ ըստ իմ կարծեաց): Այդ շուէտ–հայկական գրական–գիտական կոմիտէն կը կատարէր ընտրութիւնը նորայրեան ձեռագրերի մէջ առաջին հերթին հրատարակութեան արժանի (պատրաստի կամ կիսա–պատրաստի գործերի) եւ կը փոխանցէր Չեզ՝ Փարիզ՝ հրատարակութեան: Այդ շուէտ–հայկական նորայրեան կոմիտէն Չեզ կը փրամադրէր փաստօրէն նորայրեան չեռագրերից արժեքաւորները՝ փրոֆ. Նիպերկի միջոցով հնարաւորութիւն տալով ստանալ՝ Կէօքըպորկ–Ռուսիայից՝ Փարիզ:

Այս շուէտ–հայկական կոմիտէն (5–6 հոգուց) անհրաժեշտ է այն դէպքում ի հարկէ, եթէ Կէօքըպորկի քաղ[աքային] ինքնավարութիւնը մերժէ Չեր խնդիրը՝ ծախել կամ նուիրել նորայրեան ձեռագրերը: Մեր նպատակն է հրատարակուած տեսնել նորայրեան գործերից արժեքաւորը ու պատրաստին (մի 2–3 հատոր) եւ Դուք անշուշտ համամիտ կը լինէք թէ պէտք է փորձել բոլոր ճանապարհները, որոնք կարող են փրկել նորայրեան աշխատութիւնները մի նոր 32 տարի եւս փտտելու դարակներում անպէտքօրէն ու անյայտ:

Ես խօսել եմ շուէտ–հայկական նորայրեան կոմիտէի ստեղծման հնարաւորութեան մասին փրոֆ. Նիպերկի հետ, վերջինիս նախագահութեամբ ու Արտուազդ արքեպ[իսկոպոսի] պատուաւոր նախագահութեամբ: Նա սկզբունքով համաձայն է, որ եթէ ձեռագրերը չյանձնուեն Չեզ սեփականատիրոջ կողմից, նա դէմ չէր լինի իր մասնակցութիւնը բերել շուէտ–հայկական նորայրեան կոմիտէին: Այնպէս որ նա նախապատրաստուած է այս ուղղութեամբ եւս, եւ Դուք

կարող էր խօսել հետը այդ մասին, եթե հարկ համարէք:

Ես ուզում էի գրել Չեզ նորայրեան ձեռագրերի մասին, գրել նոյնպէս Չեր գեղեցիկ գործի – *Roseraie d'Arménie*²² հատորների շուտօրէն բարգմանութեան կազմակերպումի մասին, սակայն մամակս չափազանց երկարեց: Ես շտապում եմ նախ եւ առաջ՝ Չեզ հաղորդել անհրաժեշտ տեղեկութիւնները Չեր հայ-շուտական հայագիտական բարեկամութեան ցոյցի յաջողութեան նպատակով: Շուտը սիրում է *փայլ* եւ չափազանց զգայուն է դէպի իր անձը ցուցադրած արտաքին պատիւը: Ես համոզուած եմ, թէ հայ-շուտական հանդիպում-ընդունելութիւնը՝ շնորհիւ Չեր եւ Արտաւազդ արքեպ[իսկոպոսի] ջանքերի՝ թոյլ կը տայ ոչ միայն լուծելու նորայրեան ձեռագրերի բախտը Չեզ ցանկալի ուղղութեամբ, այլեւ նուաճելու շուտ դեկավար մտաւորականութեան բարեկամութիւնը՝ մեզ հետ ունենալու շուտական օգնութիւնը նաեւ բոլոր կարելուր հայկական խնդիրներում:

Խորին յարգանքով՝ Ս. Լօրէլի

5.VI.1948, Ուփսալա.

Խոունակարան 6.

Յ. Գր.– Հետաքրքրութեամբ կարդացի *Անահիտի* մեջ Չեր խորհրդածութիւնները արեւելահայ եւ արեւմտահայ բարբառների շուրջ²³: Ճիշդ է միանգամայն, որ *տեքրեով*²⁴ չի կարելի ընտրել լեզուն կամ պատրաստել լեզու, ինչպէս մի տանձենիին կամ խնձորենիին պատուաստում են նոր ճիւղ–պտուղ: Պէտք է թողնել ժամանակին ու հանգամանքներին (վաղուան օրում՝ որ անյայտ է մինչ այսօր) մեր լեզուային միութիւնը բնականօրէն լուծելու: Սակայն պէտք է ընդգծել, թէ *հայ լեզուի հիմքը հեղել է եւ մնում է Այրարատեան դաշտի գիղացու հասնով–հոյրով խօսած լեզուն*, որը այն առաւելութիւնը ուներ եւ ունի մեր միւս գաւառներում (տաճկահայ կամ ռուսահայ) ապրող հայ ազգաբնակչութեան խօսած հայերէնների հետ համեմատած, որ այրարատեան գիղացիի լեզուն *հասկանալի* էր մեր բոլոր գաւառների գիղացիներին: Ես երեւանցի չեմ եւ չեմ տառապում *լորալ – փաթրիոթիզմով*²⁵, եւ ծանօթ եմ արեւմտահայ հեղինակների շէ–տեօվրների²⁶ հետ:

Չգիտեմ թէ ի՞նչ է կատարում Տաճկաստանում փակուած հայութեան բեկորների հետ, սակայն սփիւռքի *արեւմտահայ լեզուն կորցրել է իր փակի հիմքը*– մայր երկիրը եւ հողի վրայ նստած ժողովրդական զանգուածը– եւ նրա զարգացումը ընթանում է ոչ–առողջ ճանապարհով: Մեր նախկին արեւմտահայ գաւառների բարբառների փոխարէն՝ ստեղծում են ֆրանսահայ, ամերիկահայ, եգիպտահայ եւայլն «լեզուներ» եւ սփիւռքի *գրական* արեւմտահայ բարբառը կամ պիտի մի նոր «գրաբար» դառնայ կամ մեռնի օտար երկնակամարի տակ: Արդէն հայ սփիւռքի 3–4 սերնդի հայութեան լեզուն՝ *Հայաստանի ժողովրդի* (ռուսահայ թէ տաճկահայ) խօսած լեզուի հետ արիեստականօրէն է միայն պահպանելու իր կապը, որպէս մի *օրարացու կապը՝ սիրած օրար լեզուի հեղ*: Եւ միանգամայն ճիշդ է Չեր եւ բոլոր նրանց ընթացքը, որոնք սփիւռքի *մասսաների*²⁷ ներգաղթի ջերմ պաշտպանն են:

Ի միջի այլոց, թոյլ տուէք ինձ մի «փարատոքս» այստեղ, որ *ներգաղթը*՝ հայութեան ազգային ինքնապաշտպանութեան տեսակետից՝ ողջունելի է ոչ միայն *ներգաղթողների համար*, այլև այսօրուան ապրող Հայաստանում գանգուածների: *Պատմական փաստ է, որ ռուսահայութեան* ազգային ինքնագիտակցութեան զարգացումը XIX դարում (չեմ ուզեր արելի խորը յետադարձ հայեացք ձգել) կատարուել է *տաճկահայութեան* ուժեղ ազդեցութեան տակ: Անելին, ռուսահայ գանգուածները կովկասեան քաղաքներում եւ գիւղերում ընդունելով *պարբերաբար* տաճկահայ գաղթականութիւն (*մերստրակաւներ* Կ. Պոլսից, Վանից, Մուշից, Կարիճից, Ալեքից եւայլն, եւ կոտորածներից եւ ռուստաճկական պատերազմներից հետեւող *չուտներ-տեղահանումներ* Տաճկաստանից՝ Ռուսաստան) – «հայացուել» են: Ցարական տիրապետութեան տակ ապրող մեր գանգուածների մէջ նրանք շեշտել են ռուսահայերիս «*հայկականութիւնը*», մայրենի լեզուի նշանակութիւնը եւայլն: Եւ այսօր ասիւտքից Հայաստան ներգաղթող, իր սեփական տունը վերադարձող արեւմտահայ գանգուածները՝ փրկում են ոչ միայն իրենց ապագայ սերունդները ապագայնացումից, այլև մի *յաւելեալ հայկականութեան* հոսանք են մտցնում Հայաստան, – լինի այդ մեր Հայաստանը ցարական, խորհրդային թէ մի այլ, եւ այդ *հայկականութեան քարմութիւնը* միայն դրական հետեւանքներ կարող է ունենալ Հայաստանի համար գուցէ մի քանի տասնեակ տարիների ընթացքում, մինչ որ Հայաստանի (այսօրուան) հայութիւնը կը մարսի (տիժիրէ) ներգաղթող հայ գանգուածների *հայկականութիւնը* կամ արեւմտահայկականութիւնը:

Իմ այս պնդումը սոսկ «օրիժինալ փարատոքս» չհամարէք, այլ մեր ռուսահայ եւ տաճկահայ գանգուածների կոլտուրական-հասարակական զարգացումների փոխ-յարաբերութեան, զարգացման ետապների ուսումնասիրութեան հետեւանք, ուսումնասիրութեան մի աշխատութեանս էջը, որ մնաց կիսատ մեր հայրենիքում, երբ ես չուեցի «խորհրդային դրախտը»²⁸:

Սակայն գանք լեզուի խնդրին, որ հին վէճ է մեզանում: Պետք էր լսել Պերճ Պոռչեանին Այրարատեան դաշտի խօսած գիւղացու լեզուի գովքը անելիս: Պերճ Պոռչեանը, Ղազարոս Աղայեանը եւ Յովհաննէս Ժումանեանը երեքն էլ, ինչպէս գիտէք՝ վիթխարի հասակի եւ ինչպէս ասում են՝ «պատած բերան» մարդիկ, սիրող հանաքների եւ ժողովրդի խօսած լեզուի հարստութեան ու նրբութիւնների – նրանցից իրաքանչիւրը գտնում էր, թէ իր ծննդավայր-գաւառի լեզուն *ամենահարուստն է ու ամենազեղեցիկը*. – Պերճ Պոռչեանը իր Քանաքեռի բարբառը, Ղազարոս Աղայեանը իր Բոլմիս-Խաչէնի, իսկ Յովհաննէս Ժումանեանը իր Լոռուայ Դսեղի! Սակայն յաղթանակը միշտ մնում էր Պերճ Պոռչեանին, որովհետեւ նա պնդում էր, թէ ոչ մի հայ գաւառի գիւղացին այնպէս համով-հոտով չէ *հայիոյում*, ինչպէս Այրարատեան դաշտի մաճկալը: Ու սկսում էր ոմբակոծել իր դամդաղկոտ խօսող հակաճանողներին այրարատեան ընտիր հայիոյանքներով, պնդելով թէ նրանց «կենեզիսը»²⁹ պէտք է փնտրել մեր ոսկեղարեան ժամանակներում եւ Սք. Սահակն ու Սք. Մեսրոպը «ճաշակելով» այդ հայիոյանքների զեղեցկութիւնները հմայուել էին այրարատեան բարբառով եւ նոյնիսկ *Սք. Գիրքը* այդ լեզուով բարգմանել! Զգիտեմ Ձեզ յայտենի է, որ Պերճ Պոռչեանը ոչ միայն Երեւանում *սծուխ-ծախող* է

եղել իր երիտասարդութեան ժամանակ, այլև 60–70 թուականներին Թիֆլիսում *հայ քանի հիմնադիրներից մէկը* (Շերմազանեանց դարպասում³⁰, ուր կրթման գտնում էր Արգար Յովհաննիսեանի³¹ *Արչագանքի* խմբագրատունը, Թիֆլիսի Մողնու եկեղեցուց ոչ հեռու, նախկին Կովկասի Բարեգործ[ական] Ընկերութեան հրապարակի վրայ) եւ *չափ տաղանդաւոր դերասան*, ու թրքախոր (արին թքելը) ստիպել էր նրան չուել բեմը, գրող եւ ուսուցիչ դառնալ:

Պերճ Պողոսեանը՝ իմ *կրօնի դասաւորում* է եղել Ներսիսեան դպրոցում:

Ղազարոս Աղայեանի *Այրբէնարանը* («Մայրենի լեզու»³²) իմ առաջին գիրքը, որի վրայ ես սերտել ու սիրել եմ հայ գրերը:

Յովհաննէս Թումանեանի «Շունն ու կատուն» իմ մանկութեան սիրած ոտանատրը:

Երեքի գաւակները՝ պատանեկութեան–երիտասարդութեան ընկերներ, երբեմն նաեւ՝ դպրոցական, ես վայելել եմ՝ արդէն ուսանողութեանս տարիներին երեքի – Պերճի, Յովհաննէսի, Ղազարոսի քարեացականութիւնն ու մտերմութիւնը, երբ նրանք մեր ազգային ջոշերն էին – գրական ղեմքեր: Ակամայ ծառացան առաջը մեր ժողովրդի խորքից, որպէս մաքուր աղբիւր, ժայթքած այդ երեք գեղեցիկ, կարծես գիւղական *քեթիտղաների*³³ ղեմքերը՝ արեւմտեան մտայնութիւնով ծածկուած ու մազերը քամուն տուած – երբ կարդում էի *Անահիպում* Չեր յօդուածը մեր *գրական լեզուի* մասին – յօդուած՝ որի եզրակացութիւնը չպէտք է մոռանալ, թէ *անժամանակ յարուցուած մի հարց է:*

Նոյնը

5.VI.1948, Ուփսալա

Բ.

30.VI.1948, Ուփսալա, Խտունակաթան 6

Մեծարգոյ պ. Ա. Զօպանեան
rue Say 9, Փարիզ.

Սիրելի Վարպետ,

Շնորհակալութիւններս Չեր սիրալիր նամակի համար, որին շտապում եմ պատասխանել:

Արեւելագետների եւ Լեզուագետների Համագումարները (այստեղ խօսուել է զուգահեռ երկու համագումարների մասին) հրաւիրուած են Յուլիս 19–23 օրերի համար, իսկ թէ կարգադրիչ յանձնաժողովը ո՞ր օրն է բացելու, միայն տեղում կ'որոշուի: Շուտիսան իր համալսարանների կողմից ուղարկում է երկուական ներկայացուցիչ՝ մէկը արեւելագետների եւ միւսը լեզուաբանների համագումարներին: Պաշտօնապէս Ուփսալայի համալսարանը ընտրել է փրոֆ. Հենրիկ Նիպերկին արեւելագետների, իսկ փրոֆ. Կունար Կունարստին՝ որը յայտնի սլաւիստ է եւ ֆարսիլի տը ֆիլոզոֆիի (ինչպէս այստեղ կոչում է ֆարսիլի տը լեթթը) տուայն է, լեզուագետների համագումարներին: Փրոֆ.

Ֆրիսըը կը լինի Կեօքըպորկի բարձրագոյն դպրոցից լեզուագետների քննկրէին, որպէս համեմատական լեզուաբանութեան ու սամսքրիթերէնի դասատու: Քովենհակընից կը գայ երեւի խոշորագոյն արեւելագէտ ու հայագէտ եւս,- համալսարանի թեքթոր փրոֆ. Պեհրը:

Փրոֆ. Հեալմար Ֆրիսըը հրատարակել է իր վերջին էթիսըը մեր լեզուի մասին *Etyma Armeniaca*, 1944 թուին, անելի առաջ՝ *Suffixales th im Indogermanischen* էթիսըը, անելի առաջ՝ *Indogermanica*, որոնց մէջ տեղ է գտել նաեւ մեր լեզուն: Նա շարունակել է յայտնի հայագէտ եւ նոյն Կեօքըպորկի բարձր[ագոյն] դպրոցի փրոֆ. Էւալտ Լխտէնի գիծը, իսկ այդ 1939 թուին վախճանուած գիտնականը (*Armeniaca, Armenische Studien* եւայլն) [գործերի հեղինակը] մի լուրջ ու մեծ հայագիտական դէմք էր, որ հիմնաւորապէս ուսումնասիրած էր մեր լեզուն Վիեննայի Մխիթարեանների մօտ:

Փրոֆ. Հենրիկ Նիպերկը շատ անելի մեծ ու լուրջ գիտնական է ու շատ անելի հմուտ՝ հայագիտութեան մէջ,- նաեւ վրացերէնի, օսերէնի եւ այլ Կովկասի ժողովուրդների լեզուին ու պատմութեան, խոշոր իրանագէտ, արաբագէտ, եբրայագէտ, եւայլն: Նա այնքան հմուտ է եբրայեցերէնի մէջ, որ ուղղել է շուէտ Bibleի բարգմանութեան սխալները՝ շուէտ եկեղեցու առաջարկութեամբ, եւ անգամ հրեայ եբրայագէտները նրան ճանաչում են [իբրեւ] մեծ հեղինակութիւն: Նա հայերէնի վերաբերեալ չունի յատուկ - առանձին աշխատութիւն, սակայն իր աշխատութիւնների մէջ ([ինչպէս] *Hilfsbüch des Pehlevi, Altarmenische Relig* եւայլն), ինչպէս նաեւ զանազան պարբերականներում (*Le Monde Oriental*²⁴ տարեգիրքը, որը հրատարակուած է Շուէտիայում եւ որի հրատարակչին ու խմբագիրն է նա 1926 թուից, Փարիզի *Journal Asiatique*²⁵ եւայլն) նա լուրջ վերլուծութիւններ ունի իրանաբանութեան հայկական աղբիւրների [մասին]: Սակայն սխալ կը լինէր կարծել, թէ նրա հայագիտական ծառայութիւնը մնան է համեմատական լեզուաբանութեան սովորական պաշարին՝ հայերէն մի քանի բառերին *եւ* տեղ տալու ինտոերոպական քերականութեան դասատուութեան մէջ: Նա գաղափար ունի անելի, քան մեր մտաւորականներից շատերը, մեր հին գրականութեան մասին, մեր այսօրուան արեւելահայ եւ արեւմտահայ բանասէրների մասին եւայլն: Եթէ անձամբ առիթ կ'ունենար հետը զրուցելու ֆրանսերէն, որին կատարելապէս տիրապետում է, սպա ինքները կը համոզուէք, որ եւ չեմ չափազանցում եւ տպաւորութիւններս սխալ չեն: Եթէ յաջողուի նրան *մի փոքր մօտից կապել ու հեղաքրքրել հայութեան*, նա կարող է տալ *ընդհար էթիսըըներ* հայագիտութեան մասին, մանաւանդ որ Շուէտիան այսօր տրամադրում է Նորայր Բիւզանդացիին հայագիտական անձնական ընտիր գրադարանը:

Չեր գեղեցիկ *Roseraie d'Arménie*ին շուէտական հրատարակութեան գաղափարը իմ մէջ յղացաւ [անընթ.] փրոֆ. Նիպերկի հետ Չեր Հայրէններու *Բուրասարանը* հրատարակութեան մասին գրուցելիս, երբ եւ տեսայ նրա սքանչազումը մեր Քուչակով (Չեր հաստ հատորի թերթերը կտրտուած էին, ինչ[ը] ցոյց էր տալիս թէ նա արդէն որոշ չափով կատարել էր իր «սկզբնական ծանօթութիւնը», բայց եւ *ընաւ ոչ մի խօսք չստացի նրան* այդ մասին եւ *նա առ այժմս չգիրի իմ այդ դիւրատրութեանս* մասին եւ ահա թէ ինչու:

Չեր *Roseraieի* շուտերեն քարգմանութեան համար ես ի նկատի չունեմ փրոֆ. Նիպերկին, որը ամենախոշոր գիտական դէմքն է, սակայն ոչ բանաստեղծ: Ես կ'ուզէի, որ Չեր *Roseraie*ն քարգմանէր մի մեծ, շատ մեծ բանաստեղծ: Յիշո՞ւմ էք անշուշտ Չեր գրագրութիւնը Նորայր Բիզանդացիի հետ 1904–1907 թթ. Քուչակի շուրջը: Ես լաւ յիշում եմ, որովհետեւ 1946 թուին կարդացել եմ Չեր այդ գրագրութիւնից չկորածը, արշիւում մնացածը (մեծ մասը կորած է, գէթ առայժմս, եւ վախում եմ թէ ընդմիշտ՝ քանի որ անցել է Նորայրի մահուանից 32 տարի!): Չեր քարտերը–նամակները: Նրանցից մէկում Դուք ունէք արած մի շատ տեղին *ռեկլիք*⁶, Նորայրի բանասիրական (գուցէ եւ տեղին) «բժախնդրութեան» – «խօրժանքներին», թէ՛ *Քուչակը Չեզ հեղաքըրում է որպէս արուեստագէտի, պոետի, եւ ոչ թէ բանաստի, եւ Դուք ուզում էք որ ֆրանսիացի ընթերցողը ճաշակի Քուչակի տաղերի գեղարուեստական գեղեցկութիւնները, նրա հեղինակի բանաստեղծական հանճարի մեծութիւնը: Ես այսօր նոյն կարծիքին եմ, թէ պէտք է շուտական ընթերցողին տալ մի այնպիսի քարգմանութիւն Չեր *Roseraieի*, որ նա ճաշակի հայկական միջնադարեան բանաստեղծութեան քաղցրութիւնը եւ գեղարուեստական մեծութիւնը: Փրոֆ. Նիպերկի քարգմանութիւնը կը լինէր բանաստեղծ–գիտնականի քարգմանութիւն, կատարուած ամենայն բարեխղճութեամբ ու հարազատութեամբ եւայլն եւայլն, Դուք իսկ հասկանում էք թէ ինչ եմ ուզում ասած լինել: Ես աչքի առաջ ունեմ, որպէս քարգմանիչ, մի այլ դէմք, որ այսօրուան Սքանտինաիայի գուցէ ամենից խոշոր դէմքն է արուեստի բնագաւառում (արեւմտահայերիդ խօսքը՝ կալուածքումն է կարծեմ?): Դա Փէր Լակերքվիսթը (*Pär Lagerkvist*) է⁷, որի *Le Nain* (Գաճաճը) մօտերս քարգմանուել էր ֆրանսերէն եւ քաւական մեծ յաջողութիւն էր ունեցել: Նա այսօր Շուէտ գրականութեան մեծագոյն *բանաստեղծն* է, մեծագոյն *րոմանսիստ*⁸, մեծագոյն *նովելիստ*⁹, եւ մեծագոյն *քաւերագիր–իրաւաբարկը*: Դուք գիտէք, որ Շուէտիայի նորագոյն ժամանակների գրական պատմութիւնը Ակուսթ Սթրիմպերկին¹⁰ համարում է մի գրական հանճար, որպիսի դէմք Շուէտիան չի ունեցել վերջին մի քանի տարուան ընթացքում: Սթրիմպերկը, այդ բատարը, մի աղախնի ու անյայտ հօրից, համարում է *փերֆիրպաքտօր* տէ(զ) անը¹¹: Այսօր Փէր Լակերքվիսթը [անընթ.] համարում է նոյն Սթրիմպերկի գծի շարունակողը եւ նոյնիսկ մօտերս եւ կարդացի նրա վերջին քատերական գործի մասին քննադատութիւն, թէ նա եւս մի խոշորագոյն *հոգիներ ալեկոծող* է, եւ սթրիմպերկեան մասշտաբի գրող մի:*

Ես կանգ առայ այս մանրամասնութիւնների վրայ որպէսզի Դուք պատկերացնէք թէ որպիսի խոշոր տարբերութիւն պիտի լինի *Roseraieի* քարգմանութեան մէջ թէ կատարուէր այն մի Փէր Լակերքվիսթի մեծութեան պոետի կողմից, եւ ո՛չ թէ մի մեծ գիտնականի: Հենց միայն այն պարագան, որ քարգմանուել է Փէր Լակերքվիսթի կողմից որեւէ բանաստեղծական հատոր,– արդէն մի *գրական երեւոյթ* է լինելու ամբողջ Սքանտինաիայում, ոչ միայն Շուէտիայում:

Ամենասանահասխնդիր կերպով, ես կ'ուզէի օգնած լինել այս գործում, իմ ուժերիս չափ, որովհետեւ մեր գրականութեան գոհարները միջազգային գրական շուկան հանել եւ մատչելի դարձնել բոլոր ժողովուրդներին, բոլոր երկիրներին,– մի վերին աստիճանի կարեւոր գործ, որի սկզբնաղիքը Դուք էք

եղած գրեթէ կէս դար առաջ եւ ամբողջ կէս դարուան ընթացքով Ֆրանսիայում: Ես դեռեւս չեմ խօսած Փէր Լակերքվիսքի հետ այդ մասին, ինչպէս եւ ոչ որի հետ: Պէտք է թողնել մարդկանց օգտուել կարճ ամառուան եղանակից, քանի որ Շուտիան գրեթէ ամառ չգիտէ, այլ մի քանի շաբաթ տաք-արեւոտ օրեր, եւ բարձրացնել այդ գրոյցը աշնանը: Եթէ Դուք համաձայն էք հետս, ապա կը խնդրէի ուղարկել ձօնումով *Roseraie d'Arménie*ի հատորները՝ ուղղակի իրեն՝ Փէր Լակերքվիսքին, որպէս նուէր բանաստեղծից բանաստեղծին, մի փոքրիկ մամակով, որի մէջ կարող էք յիշել թէ նրա հասցէն [անընթ.] ինչպէս նաեւ հայաստրական զգացմունքների մասին դէպի մեր այնքան տուժած ժողովուրդը Չեզ յայտնի է իմ մամակիցս Չեզ: [անընթ.] նա կը ծանօթանայ Չեր հատորների հետ (ո՛հ, եթէ հնարատր լինէր ուղարկել նաեւ Հանս Պեթէի *Armenische Nachtigall*ի մի օրինակը միաժամանակ⁴²), կը գրի Չեզ անշուշտ, եւ ես էլ առիթ կ'ունենամ արդէն *կոնկրետ* ձեռով՝ դնել խնդիրը՝ խնդրելով նրան *անչամբ գրուի[ր] կանգնել այդ գործի*: Ես ինձ պատկերացնում եմ այսպէս.— Փէր Լակերքվիսքը՝ որպէս բանաստեղծ եւ շուետական ճաշակին մօտ ծանօթ, ինքը Չեր երեք հատորներից կը կատարի ընտրութիւն, թէ ի՞նչը թարգմանէ: Դուք կը գրէք մի հակիրճ *ներածութիւն* յատկապէս շուետական հրատարակութեան համար: Եւ կը հրատարակուի այստեղի ամենախոշոր հրատարակչական տան կողմից:

Պէտք է յուսաւ, թէ Չեզ կը յաջողի մնացեալ երեք հատորները եւս Չեր *Roseraie*ի⁴³ հրատարակել: Մի՞թէ Մելգոնեան ֆոնտը կարող էր աւելի գեղեցիկ ու աւելի կարեւոր գործ տալ.— կարեւոր ոչ միայն զուտ գրական տեսակէտից, այլեւ ընդհանրապէս շատ տեսակէտներով հայութեանը ծառայող?!

Անշուշտ, պէտք է յուսաւ, թէ նորայրեան ձեռագրերը կը յաջողի ստանալ Չեզ Փարիզ, Նուպարեան Մատենադարանի համար, եւ մի երկու գործ գուցէ թէ մօտ տարիներս նոյնիսկ յոյս ընծայուի[ն]՝⁴⁴: Յամենայն դէպս մի նոր 32 *դարի* եւս փոշին չի ծածկի մեր այդ բանասէրի գործերը, որի կտակի *անհնապարտութիւնը* (եթէ չասենք աւելին) ուղղակի ապշեցնում է ամէնքին, նոյնիսկ շուետացիներին: Գոնէ իր 150 հազարը (մօտ 200–210 հազար մինչ — առաջին համաշխարհային) պատերազմի ոսկէ ֆրանք) կտակէր համալսարանին՝ հայագիտական ամբիոն հաստատելու!

Ինձ բում է, թէ Նորայրը հայ գրագէտների ընտանիքում *միակ սիեւիստեան*⁴⁵ է, որ տրամադրելով մի ահագին գումար, հարուստ մարդու կարողութիւն (չէ՞ որ այդ գումարով կարելի էր գնել 6–7 յարկանի տուն Փարիզում իսկ 1899–1913թթ.), լալիս է, կոպէկի ու սանթիմների վրայ դողում, խեղճ Կարապետ Բասմաջեանի⁴⁶ հետ սակարկում թէ պէտք է վճարել բացի յօղուածի գնից, նաեւ սրբագրութեան համար 5ական ֆրանք, գէթ 2 ֆր[անք] 50 սենթ եւայլն, եւայլն: (Հանր[ային] Գրադարանի) Բասմաջեանի *արշիւն*երում պիտի լինեն Նորայրի մամակները): Եւ այդ մարդը այն աստիճան կուրանում է, որ նոյնիսկ սեփական գործերը չի հրատարակում, իր գումարը տալ ու տարափ է անում «բարեգործութեամբ»՝ տարեկան երկու անգամ աղքատներին բաժանել իր 125 հազար քրոնի տոկոսները (20 հազարը տուել է իր աղախմուն), իր *գերեզմանի* վրայ ժողկեփունջ դնել, չնոռանալ հինգ տարին մի անգամ *ներկել* գերեզմանի

չրջանակը եւայլն!

Ես ծանօթ եմ մօտէն մեր ուսանող *բոլոր* մեծ ու փոքր գրողների կեանքին՝ դորպատեանների *պլեյադայից*⁴⁷ – ու նրա նուիրական պարագլուխ Խաչ[ատուր] Արովեանից մինչեւ Չարենց (խեղճ Եղիշէ, որ շարունակ գրական դատարկ, քանի-քանի անգամ դիմած է *ասան*⁴⁸ տալ իրեն), Գեորգ Արով, Նայիրի Չարեան, Ալազան, Ազատ Վշտունի⁴⁹ եւայլն, եւայլն: Պետրոս Միսէրնեան, Արծրունի, Արգար Յովհաննիսեան, Սպանդար Սպանդարեան, Արասխանեան⁵⁰ (յիշում եմ այստեղ Նորայր Բիզանդացու ժամանակի դէմքեր) – իրենց գրական վերջին կոպէկը դնում էին *Մեղու Հայաստանի*, *Մշակի*, *Արշազանքի*, *Նոր-Դարի*, *Մուրճի* վրայ: – իրենք ծառայում էին, պաշտօնավարում մի որեւէ հիմնարկութեան մէջ ու թերթի վրայ ծախսում: Ես ինքս իմ ականջով լսած եմ Առաջին Համաշխարհային պատերազմի նախօրեակին հայ խմբագիրներից մէկին՝ պոռալիս իր կնոջ վրայ, որը տրտնջում էր թէ ինչու իր ամուսինը հազարները ջուրն է ածում, թերթը հրատարակելով, – պոռալիս թէ.–

«Ես իմ վերջին շապիկն էլ կը ծախեմ, ու թերթս չեմ դադարեցնի, քո փոխանն էլ կը ծախեմ, երեսներս էլ տկլոր թող ման գան, – բայց քանի աչքս բաց է՝ պիտի լոյս տեսնի!»

Այսպէս են եղել բոլորը, այսպէս էր եղել Դուք, մեր աւագները, *Անահիպը* հրատարակելիս, *Բանասէրը* հրատարակելիս, ու փողոցներում քաքալէտ ու շաքարաշէն գիշերները ծախել են:

Քանի անգամ, թերթելով նորայրեան կտակի պատճենները ու նրա ձեռագրերը, Չեր անակների մնացորդները, ես ինձ ասում էի, թէ՝

«Ո՛հ, եթէ 200 հազար կանխիկ դրամ 1899–1913թթ. լինէր մի Չօպանեանի, մի Բասմաջեանի ձեռքին, ինչ պիտի լինէին *Անահիպը* ու *Բանասէրը*, տպագիր գործերի որպիսի հեղեղ պիտի տեղար! Իսկ Նորայրը իր սեփական գրական գործի վրայ զլանում է 150 քրոն (200 ֆր[անք]) տարեկան ծախսել ու հրատարակել իր *Բանասէրը* տարեկը մի անգամ, եւ *դադարեցնում* է իր այդ հրատարակութիւնը այդ պատճառով⁵¹:

Սա մի *հրէշտոր* փաստ է, որ նմանը չունի մեր գրողների ընտանիքում: Մի՞թէ տաճկահայ իրականութեան մէջ եղել է մի *երկրորդ* այսպիսի *սփեպիւն*? Դուք չէք կարող երեւակայել, թէ որչափ յուզել է այս փաստը ինձ իր ժամանակին, երբ թերթում էի ու փոշուց մաքրում նորայրեան ձեռագրերը Ուփսալայի համալսարանի գրադարանում ու ծանօթանում–ուսումնասիրում այն: Երբ դառնում էի տուն, կիցս, որ մի շուետուի է⁵², չէր ճանաչում ինձ, այն աստիճան ես յուզուած էի լինում նորայրեան այդ յիմարագոյն «վերջին կամքի» թելադրանքից: Նա վախճանուել է 1915թ.ի Դեկտեմբերի 25–26 գիշերը, ուրեմն՝ այսպէս ասած՝ *ակախապես* հայկական մեծ աղէտին *Ապրիլ* 11–24ի: Եւ մեր այդ «ազգասէր» բարերարը, որ ամէն քայլափոխում կուրծքը ծեծում է թէ «կը սիրեմ իմ ազգը» իր 150 հազար շու[ետական] քրոնը բաժին է հանում աղախանին 20 հազար եւ մնացեալը շուտ «աղքատիկ»ներին բաշխում եւ ոչ մի սանքիւ մեր *փշուր մը հաց* մուրացող որբերին, դռնէ դուռ ընկած...

Եւ գիտէք, սիրելի Վարպետ, որ Շուետիայում *աղքատ չկայ* այդ բառի այն իմաստով, որ գոյութիւն ունի այլ երկրներում: Այստեղ *աղքատ չկայ*, ամէն-

քը ունին մի պատաստ հաց ու ծածկուած յարկ, որովհետև *պետրոսիւնը հոգում է պետրական զանչարկոյից*, բաշխելով թոշակ ծերունիներին, տկարներին, այրիներին, որբերին, կարիքաւորներին ապրուստի միջոց, ձրի բժիշկ ու դեղ, ձրի հագուստ ու կօշիկ եւ այլն: Կան կարիքաւորներ, բայց ոչ աղքատ ու անտուն: Չեզ գաղափար տալու [համար] այստեղի սոցիալական-տնտեսական օրէնսդրութեան մասին, կը յիշեն, որ անցեալ տարուանից *ամեն մասնուկ իր ծննդեան տարին օրոսանից մինչեւ 16 տարեկանը* (լրացումը) ստանում է 240 քրոն [անընթ.] (100 տոլար[ի] մօտ) տարեկան թոշակ, - լինի այդ երեխան կարիքաւոր թէ միլիոնատէրի զաւակ, անխտիր, որպէսզի ծնողները լաւ կերակրեն եւ լաւ հագցնեն իրենց զաւակներին: Հարուստ ընտանիքները իրենք կարող են հրաժարուել այդ թոշակից, բայց օրէնքը չի բաժանում դասակարգերի իր երեխաներին ցոյց տուած օգնութեան ժամանակ:

Եւ գգում էք, անշուշտ, թէ որքան *անպտեղի* է նորայրեան կտակի յիմարտօքիւնը մի այսպիսի երկրում, ուր *աղքատ չկայ*, եւ երբ հայ ազգը աշխարհիս ամենաաղքատ ու թշուառն էր, մանաւանդ 1915 թուին, եւ Նորայրը տեսնում էր այդ: Ներեցէք ինձ, որ ես անկարող եղայ զսպել իմ վրդովմունքս այս նորայրեան անծայր *քարասրբութիւնից*:

Ի հարկէ, - անցեալն է անց, ու անհատը մի կողմն է մնում, երբ գրական ժառանգութեան շուրջն է խօսքը: Եւ ես իմ վրդովմունքս չէի կարող չարտայայտել մի հայ գրողի, որի ճանապարհը նոյնպէս կարիքի ու գրկանքների հովիտ է եղել, - բայց նա մինչեւ վերջ մնացել է *հայ գրող*, - ամէն ինչ հայ գրականութեանը զոհ բերելով, եւ գրականութիւնն ու իր տաղանդը ծառայեցնելով իր ժողովրդին:

Նորայրը վախճանուել է 1915թ. Դեկտեմբեր] 25-26ին: Նրա դիակը մինչեւ 1924 թ. Դեկտեմբերը մնացել է Վենետիկ³³: Նրա 25 արկղ (Մթոքիովմում 1903թ. թողած) իրերից 17 արկղ իր *Հայերէն-Ֆրանսիերէնի բարագիրքն*³⁴ է եղել: Մնացեալ գրքերը՝ գրադարանը: Չեռագրերը՝ իր հետն է ունեցել Վենետիկում: Վենետիկի Միսիթ[արեան] վանքը պատրաստ է եղել գնել 30 *հազար* ֆրանքով ձեռագրերը, սակայն Նորայրը պահանջելիս է եղել 40 հազար ֆրանք (դարձեալ *նորայրեան* գիծ!): Այդ 1915-1924թթ. թէ ի՞նչ է եղել ձեռագրերի մեծագոյն մասի հետ, - յայտնի չէ, թէ *որպէս են կորել* Նորայրի շատ ձեռագրեր կամ ձեռագրերի որոշ մասեր, Նորայրի նամակագրութիւնը՝ որի մի մասն է միայն մնացած, աննշան մասը: Յայտնի է, որ 1922թ. *Հոկտեմբերին* ժառանգ[որդ] *Ֆրեյդրիքս Պրենմէր Զեօրպունլէթ* կանանց բարեգործական ընկերութիւնը 1.810 քրոնով գիջում է գրադարանն ու ձեռագրերը Կէօքլայորկի համալսարանի Մատենադարանին (քաղաքային), հայագետ Էւալտ Լիտենի միջամտութեան շնորհիւ: 1922ից մինչեւ 1945-1946ը Կէօքլայորկի Քաղաքային Մատենադարանը հայերէն գրքերը մի կողմն է ձգում (մինչեւ այժմս դեռ չկայ կատարուած ցուցակագրութիւն այդ գրքերի), իսկ թղթերը (Ֆատրա տը փափիէ) մի մասը դէն է ածուում, որպէս աղբակոյտ, եւ մի մասը *պապրահմանք*³⁵ իմ Շուտիա ժամանումիս շնորհիւ՝ ազատուում է կորստից: Մի սոսկ պատահականութիւն, որովհետեւ եթէ ես մի փոքր ուշ ժամանէի Շուտիա, երեւի այդ մնացորդ թղթերն եւս կը կորչէին անհետք, ինչպէս միւսները: Դատեցէք մեր Նորայրի

հեռատեսութիւնը: Կարծում եմ, ես Չեր մամակի բոլոր հարցերին պատասխանեցի ու մամակս չափից անլի երկարեց: Ներեցէք:

Ես յոյս ունեմ, թէ Չեր ընդունելութիւնը եւ գրոյցը փրոֆ. Նիպերկի, Ֆրիսքի, Կունարստնիւն եւ միւսների հետ կը տայ դրական հետեւանք եւ նորայրեան ձեռագրերը կը դառնան Չեր Նուպարեան Մատենադարանի ու Մելգոնեան ֆոնտի սեփականութիւնն ու ամէն հայ գրագէտ կարող է օգտուել, ձեռագրերը կարգաւորելուց յետոյ:

Խորին յարգանքով, Չեր՝ Ս. Լօրէլլի

30.VI.1948,

Ռոփսալա, Իտոմնակաքան

[Անընթ.] Սքանտինաւիայի սառնամանիքներում մոռացել եմ եւ խառնում եմ հայկական ուղղագրութիւնները.— կը ներէք ինձ անշուշտ:

[Անընթ.] Տա չէ սիրում երբ իր ազգանունը գրում է qvist, եւ գրում է kvist! Pär Lagerkvist, Vikingavagen 1, Lidingo 1.

[Անընթ.] Նա Գեորգ Պրանտէսի²⁵, Տանիմարքի Չեզ յայտնի գրական քննադատի ու յայտնի հայաստի բերանից է լսած առաջին անգամ հայութեան մասին.— ինչպէս գրում է ինձ:

[Անընթ.] օրական մօտ *մի ֆրանք* ոսկի է (մինչեւ 1914թ. պատերազմական):

Գ.

10.VII.1948

Ռոփսալա, Իտոմնակաքան 6.

Մեծարգոյ պ. Ա. Չօպանեան
9 rue Say, Paris 9e.

Միրելի Վարպետ,

Այս բոպէիս ստացայ Չեր սիրալիր մամակը եւ շտապում եմ պատասխանել, որպէսզի Դուք ունենաք Չեզ հետաքրքրող հարցերի պատասխանները մինչեւ արեւելագետների—լեզուագետների համագումարի բացումը:

1. Շուետիայից գալու եմ ոչ թէ երեք փրոֆեսորներ.— Նիպերկ, Ֆրիսք եւ Կունարստն.— այլ գուցէ կրկնակին, որովհետեւ Լուստի համալսարանը, Արեւելագետների Ընկերութիւնը եւ այլն նոյնպէս ունենալու եմ իրենց ներկայացուցիչները, եթէ Չեր գրոյցը մի *մասնատր* բնոյթ է կրելու հայագէտ փրոֆեսորների հետ *Նորայրի ձեռագրերի* շուրջը, ապա ատելորդ է հրաւիրել Կունարստն փրոֆեսորին, որը մի սլափստ է, եւ պէտք է սահմանափակել հրաւերը Նիպերկով ու Ֆրիսքով, որոնք հայագէտներ են եւ ես նրանց հիմնատրապէս ծանօթացրել եմ իր ժամանակին Նորայրի ձեռագրերի բովանդակութեան ու ընդհանրապէս նորայրեան ձեռագրերի նուիրման—գիշտան հայկական ազգային որեւէ հաստատութեան հարցի հետ:

2. Եթէ Չեր թէյասեղանին (որը կարող է շատ պարզ ու նոյնիսկ աղքատիկ

լինել, այդ չէ կարելորդ) տալու էր մի *պատուոյ ընդունելութեան ընոյթ*՝ Նուպարեան Մատենադարանի սրահում, հայութեան երախտագիտութիւնը արտայայտելու շունտացի եւ շուէտ գիտնականների–մտատրականութեան 250ամեայ հայագիտութեան հետաքրքրութեան առթիւ, ապա անհրաժեշտ է հրաւիրել Շուէտիայի համալսարանների (Ուփսալայի եւ Լունտի, Սթոքհոլմի եւ Կէօքըպորկի) բոլոր գիտնականներին, եւ ճոյնիսկ շուէտ դեսպանին եւ բոնսիւլ–ժեներալին:

Ինձ քուով է, թէ լաւ կը լինէր այս դէպքում հրաւիրել նաեւ Քոփենհակընի եւ Օսլոյի համալսարանների փրոֆեսորներին եւս, որովհետեւ Տանիմարքը ու Նորվեժը օրկանապէս–մտերմաբար կապուած են Շուէտիայի հետ, մանաւանդ՝ համալսարանական մտատրականութիւնը:

Ես գտնում եմ այս երկրորդ կարգի ընդունելութիւնը, 250ամեակի շուրջը, թէ՛ անելի պատուաբեր Շուէտիայի գիտնականների համար եւ թէ՛ անելի նպատակայարմար՝ *նորայրեան չեռագրերի* ստացման տեսակետից եւս: *Կարելոր նաեւ այս հարցի փեսակէտից* (Նորելեան փրիզի), *որը հետաքրքրում է Չեզ եւ ահա թէ ինչո՞ւ*:

3. Չեզ յայտնի չէ, թէ որպիսի ահագին աշխատանք է տարւում թեկնածուների կողմից, Նորելեան գրական մրցանակը ստանալու: Այդ մրցանակը բաշխում է Academie de Suede[ը] որը բաղկացած է 18 անդամներից, որոնցից մէկն է փրոֆ. Նիպերկը, միւսը այն բանաստեղծ Լակերքվիսթը, որին ես կ'ուզեմայի հետաքրքրել Չեր *Roseraie d'Arménien*վ: Այդ 18ը արատենիսիէններին հեղինակները ուղարկում են իրենց աշխատութիւնները, նրանց հետ ծանօթանալու համար, իրենք գալիս են Սթոքհոլմ՝ դասախօսելու, իրանց վրայ ուշադրութիւն դարձնելու, կատարում են այցելութիւններ–վիզիթներ այդ արատենիսիէններին շարմէ՞6 անելու եւ այլն: Ահա Չեզ անցեալ տարուանից մի իրական օրինակ: Սարքը՞7 եւ Ժիւ Ռոմէնը՞8 (յիշենք այս երկու ֆրանսիացի Չեզ ծանօթ գրողներին միայն) եկան՝ մրցանակի բաշխումից մի երկու ամիս առաջ, առաջինը այցելեց ծերունի արքայի եղբայրներին (փրենս Էօժէնին, որը նկարչութեամբ էր հետաքրքրում, եւ փրենս Քարլին, որին հիւր գնաց նրա կալուածքը) եւ Էկզիսքենսիայիզմի հեղինակը մնաց բաւական երկար ժամանակ Շուէտիայում, իբրեւ «թուրիսթ» ի հարկէ. միւսը՝ Ժիւ Ռոմէնը իր ճարտասանութեան վերջին ճիգերն էր թափում իր հրապարակային դասախօսութիւններին՝ իր վրայ դարձնելու ընդհանրութեան ուշադրութիւնը: Ստացաւ Ժիւնը՞9 փրին որի թեկնածութիւնը անելի ճարպկօրէն էր կազմակերպուած: Չեն ուզում երկարել այդ մասին:

Եթէ լուրջ կերպով չկազմակերպուի, հայկական գրական դեմքին շանդ շատ փոքր է լինելու, որքան էլ նա արժանատր լինի այդ մրցանակի համար,– եւ ես գիտեմ, կոնկրետօրէն, որ օրինակ Կապրիէլ Միսքրալ՞60 չիլիացի կին բանաստեղծը Չեր մատն իսկ չարժէ, բայց ստացաւ Նորել–փրին, եւ նա–այդ չիլիացի բանաստեղծուիին չէ միայն, որ առանց մի բան լինելու գրականութեան մէջ, Նորելեան մրցանակի էր արժանացել:

Իսկ Դուք, հայ աղքատ հեղինակը, անգամ մի օրինակ Չեր *Roseraie*ն չունէք, որ նուիրէք Փեր Լակերքվիսթին,– Սքանիտիմաիայի մեծագոյն բանաս-

տեղծին, որից կախում է շատ-շատ բան, քանի որ նա է լինելու Նորել փրիի բաշխողը, եւ որպէս բանաստեղծ՝ վճռական խօսք է ունենալու Չեր վերաբերմամբ՝ որպէս բանաստեղծի ու Նորելեան-փրիի թեկնածուի:

Մի բարեպատեհ հանգամանք. - հայագետ եւ Չեր *Հայրէններու Բուրասպան*ով սքանչացած փրոֆ. Նիպերկը այդ Academie de Suedeh անդամ է, - ուրեմն այդ կանառը հնարաւորութիւն ունի *անմիջակակօրէն* գաղափար կազմելու Չեր հայերէն բանաստեղծութիւնների մասին: Իմ կարծիքով, երբ Չեր ընդունելութեան՝ այսպէս ասած՝ պաշտօնական բաժինը վերջանայ, թող Արտաւազը Արքեպ[իսկոպոսը] (Չեզ համար անյարմար կը լինէր այդ, քանի որ հարցը Չեր մասին է լինելու) մի անկիւն քաշէր փրոֆ. Նիպերկին եւ առջարկէր նրան թէ արդեօք կարելի չէ՞ որ հայութիւնը եւս Նորելեան-փրիի ուշադրութեանը արժանանար? *խնդիրը դնելով սկզբունքայնօրէն* միայն, առանց անունը տալու Չեր: Եթէ փրոֆ. Նիպերկը բարեպատեհ պատասխան տայ, ապա արդէն կարելի է աւելի որոշակի մեզ (Չեզ եւ այստեղ) մտածել, թէ ինչպէ՞ս պէտք է կազմակերպել արատեմիսիէնների գրառումը: (Չեզ ծանօթ է Արատեմի Ֆրանսէզի բուլխային խաղերը՝ երբ թեկնածուները սկսում են սիրաշոյել արատեմիսիէններին՝ քուէներ շահելու): Յամենայն դէպս Դուր ի նկատի պիտի ունենար, որ Չեր *Roseraies* ների հատորները եւ այլ հատորներ (նաեւ *Les Trouveres Arm[éniens]*⁶¹) պիտի նուիրէ 18 արատեմիսիէններին Շուետիայում, գուցէ նաեւ թագաժառանգին (66 տարեկան է) որը որոշ դեր է խաղում՝ այստեղի մտաւորականների հաւաքոյթներին երբեմն նախագահելով, թագաւորի ծերութեան (90 տարեկիւն) պատճառով: Փրոֆ. Նիպերկը այստեղ չէ, որ ինքս այդ մասին խօսէի: Նա արդէն մեկնած է, եւ Փարիզ գալուց առաջ երեւի կ'այցելի ուրիշ գիտական կենտրոններ եւս, ճանապարհին:

Ուրեմն, այս խնդրին կը վերադառնանք Չեր՝ ընդունելութիւն-թէյասեղանից յետոյ, որին այդ իսկ պատճառով տուէր որքան կարելի է փայլ (ոչ թէ սեղանի ճոխութեան տեսակետից), հրաւիրելով շուետացի բոլոր գիտնականների, Շուետիայի դեսպանի եւ քոնսիլ-ժեներալի (նաեւ փրէս-աթաշէին⁶² կամ կուլտուրական բաժնի վարիչին, կամ Սթոքհոլմի թերթերի թղթակիցներից՝ մանաւանդ *Svenska Dagbladet*, *Dagens Nyheter* եւ *Stockholms-Tidningen* մեծ թերթերի), որպէսզի խօսեցնէր հայութեան մասին [անընթ.], հասարակական կարծիք պատրաստէր այստեղ, թէ գոյութիւն ունի հայկական մշակոյթ՝ որի ներկայացուցիչները փառաբանել են Փարիզում Շուետիան ու նրա գիտնականներին հայագիտութեան 250ամեակի առթիւ:

Համաշխարհային երկու պատերազմները աւերակ դարձրին միւս երկիրները, աղքատացրին աշխարհը. - իսկ Շուետիան հարստացաւ այդ պատերազմների շնորհիւ, կուլտուրական թռիչք գործեց առաջ եւ - համարեցէք մարդկային բուլութիւն կամ պակասութիւն՝ սիրում են արտաքին փայլ ու փառաբանութիւն, շոյլուում է նրանց ինքնասիրութիւնը՝ երբ շեշտում է նրանց բարի գործը, գիտնականութիւնը, եւայլն: Ու զարկում է թմբուկ ամբողջ երկրում, - այսպէս է ամէն բնագաւառում: Ես շատ կ'ուզէի, թէ Դուր լուրջ ուզում էր դնել Չեր թեկնածութիւնը Նորելեան մրցանակաբաշխութեան, - ապա Չեր թէյասեղանին՝ *թէկուզ աննասնասպանոյ՛ն* հրաւիրէր իմ վերը թուած երեք երկրների

գիտնականներին եւ շուէտ դեսայանին, որը պաշտօնապէս կը զեկուցի կառավարութեանը, իսկ վերջինս հայասեր է եւ վճռող դեր ունի նոյնիսկ Նորբէլեան մրցանակաբաշխումների մէջ:

4. Ես դժբախտաբար չունեմ այստեղ Չեր *Roseaie d'Arménie*ին հատորները, որոնց հետ ծանօթացել եմ Մոսկուայում, որտեղ մնացել է իմ անձնական գրադարանս, եւ «երկաթ վարագոյրի» այն կողմը ընդմիջտ փակուած է ինձ համար: Ես կողմնակից եմ ներգաղթին եւ ամեն աջակցութեան՝ Հայաստանին— լինի նա դաշնակցական, խորհրդային, ցարական թէ այլ— որովհետեւ նա հայութեան միակ օրրանն է, յենակետը.— սակայն այդ *փարապիզի*⁶⁵ կարգերով սքանչացողը չեմ. Ազատութիւնը հացից առաջ! Եթէ տրամադրէի, հաւատացէր, որ չէի գրել Չեզ ուղարկեցէր Չեր հեղինակութիւնը ուղղակի Փէր Լակերքվիսքին, եւ իմ օրինակներս կ'ընծայէի նրան:

Դժբախտաբար ես չգիտեմ գրատունների—անթիքվարների⁶⁴ հասցէներ Փարիզում, ուր կարելի կը լինէր գնել: Ես կարող էի գնել, եթէ թոյլատրէին փոխանցել դրան արտասահման, եւ նուիրել շուէտ մեծամուն բանաստեղծին:

Յամենայն դէպս, եթէ փրոֆ. Նիպերկը նպաստաւոր կարծիք յայտնի Արտաւագ Արքեպիսկոպոսին հայութեան հեղինակի թեկնածութեան կարելիութեան (յաջողութեան) մասին, լաւ կը լինէր որ Դուր Չեր *Roseaie*ն նուիրաբերէիք, որ նա ծանօթանար հետը:

Խորին յարգանքներովս, Չեր՝ Ս. Լօրէլի

10.VII.1948

Ուփսալա, Խումնակաքան 6.

Նոյն օրն իսկ, երեկոյեան ժամը 7.15—7.30 Փարիզից *ուղղակի* ռատիոյով հաղորդում եմ (յատուկ քորրեսպոնտենթ)⁶⁵ շուէտացիներին հետաքրքրող նորութիւններ:

Դ.

14.VII.1948

Ուփսալա.

Մեծարգոյ պ. Ա. Զօպանեան
9 rue Say, Paris 9e.

Միրելի Վարպետ,

Ես արդէն պատասխանած էի Չեր նամակին, որի մէջ հաղորդած էիք, թէ թէյասեղանը միայն երեք փրոֆեսորների (Նիպերկ, Ֆրիսք, Կունարստն) համար էք որոշած կազմակերպել, երբ ստացայ (այսօր) Չեր նոր նամակը, որի մէջ ուրախացնում էք, թէ ընդունելութեանը տալու էք անելի լայն բնոյթ, հրաւիրելով նաեւ Նորվեժի ու Տանիմարքի գիտնականներին, որոնք գալու են Փարիզ Լեզուագետների եւ Արեւելագետների Համագումարին:

Նորվեժից եւ Տանիմարքից թէ ովքեր են գալու, ինձ դժուար է ասել, որովհետեւ այդ մասին չկայ այստեղ տեղեկութիւն, իսկ Օսլոյից եւ Քոփենհակընից,

հարցնելով համալսարաններին, ստանալ տեղեկություններ՝ արդեն ուշ կը լինի, որովհետև մի քանի օր կը տևի, իսկ մի քանի օրից համագումարները Փարիզում արդեն կը սկսեն իրենց աշխատանքները: Կարող եմ Չեզ յայտնել ենթադրաբար, թե անշուշտ կը գան երեւի նշանաւոր արեւելագետ-իրանագետները, ուրեմն եւ հայագետները՝ Նորվեժի կողմից Օսլոյի յայտնի փրոֆ. Փոն Մունթե ալ Մորկենշթիերնէ (G.V. von Munthe af Morgenstjerne), հեղինակը *Indo-Iranian Frontier Languages* անգլերէն գործի, եւ փրոֆ. Ֆոկս⁶⁶ (J. Vogt), իսկ Տանիմարքի կողմից՝ Քոփենհակընի փրոֆ. Ա. Քրիսթենսէն (A. Christensen), հեղինակը *L'Iran sous les Sassanides* ֆրանսերէն յայտնի գործի (1936 թուին) եւ փրոֆ. Լ. Հիելմսլէ (L.T. Hjelmslev), հաւանօրէն նաեւ Քոփենհակընի համալսարանի ղեկավարը, որի անունը տուած էի մի քանի օր առաջ գրած նամակումս:

Եթէ Չեզ թեյասեղան-ընդունելութեան կազմակերպիչ յանձնաժողովը կապ հաստատի Լեզուագետների ու Արեւելագետների Միջազգային Համագումարների կազմակերպիչ յանձնաժողովի հետ, ապա [կը տրուի] Չեզ անհրաժեշտ բոլոր տեղեկությունները. — թէ Սքանտինաւիայի ո՞ր երկրից եւ ո՞ր համալսարանից ո՞վ է եկած Չեզ հետ Փարիզ:

Խորին յարգանքներովս, Չեզդ՝ Ս. Լօրէլլի:

Յ. Գր. Մի փոքրիկ խնդիր: Չեզ *Անահիտի* վերջին թուի մէջ կարդացի *Արուր Եսդուպեանի* (Լուս Անճելից) յօդուածը, որի մէջ նա յայտնում է, թէ կազմել է *Լայրիւնագիր* հայերէն բառագիրք եւայլն: Կը խնդրէի տալ ի՞նձ նրա հասցէն, ստանալու նրանից մի օրինակ այդ բառագրքի: Զգիտե՞ք արդեօք արժեքը գրքի, որպէսզի ուղարկէի նրան:

Նոյնը:

Ե.

20.IX.1948
Ռոֆսալա.

Մեծարգոյ պ. Ա. Ծօպանեան
9 rue Say, Paris 9e.

Միրելի Վարպեան՝

Վերադառնալով Ռոֆսալա, ես գտայ Չեզ նամակը Վիեննից: Անշուշտ ներողամիտ կը լինէք ակամայ ուշ պատասխանելու[ս]:

Գուք հաղորդում էք ցաւալի լուր, թէ Շուետիայի եւ Սքանտինաւիայի հայագետ գիտնականների համար ծրագրուած ընդունելութիւնը (թէյասեղանը) ջուրն ընկաւ: Ես չեմ հասկանում թէ ինչու?! Նիւթական դժուարութիւն[?] ինձ է եղել պատճառը թէ[?] կազմակերպիչ յանձնաժողովի մէջ երիտասարդ ուժերի բացակայութիւնը՝ «սեւ աշխատանքի» կատարման համար?!

Կրկնակի ցաւալի է, որովհետև կորցրիք առիթը մօտից ծանօթանալու Շուետիայի ականաւոր մտաւորականների հետ, գրուցելու հետները Չեզ հետաքրքրող հարցերի մասին եւ առիթ տալու նոյնպէս այստեղի հասարա-

կութեան «աղին»՝ ծանօթանալու Չեզ եւ հայ մտաւորականութեան հետ Փարիզի:

Չեր նոյն նամակում հաղորդում էր, թէ մի քանի օրից վերադառնալու էր Վիեննից Փարիզ եւ կ'ուղարկէր ինձ՝ փրոֆ. Նիպերկին փոխանցելու՝ Չեր մի քանի ֆրանսերէն (ինչո՞ւ միայն ֆրանսերէն, երբ նա կարողութեամբ է նաեւ հայերէն?) աշխատութիւնները: Ես սիրով կը կատարեմ Չեր յանձնարարութիւնը, սակայն մինչայժմ ոչ մի գիրք չունեմ ստացած Չեզանից փրոֆեսորի համար: Եթէ փոխած չէր Չեր մտադրութիւնը, կը խնդրէի յամենայն դէպս ի նկատի ունենալ իմ համեստ կարծիքս.՝ որպէս տեղիս մտաւորականութեան աւելի մօտէն ծանօթի.՝ որ անյարմար կը լինէր տալ փրոֆ. Նիպերկին հայ գրականութեան մասին մի գիրք՝ վերադարձնելու պայմանով, երբ ինքը չէ մեզից գիրք խնդրողը եւ մենք ենք որ ունենք նրանից ակնկալութիւն՝ կարդալ անպայման այս կամ այն հայ գրականութեան վերաբերեալ գիրքը: Կը խնդրէի, ուղարկելու դէպքում, մակագրէք Չեր գլխաւոր հեղինակութեան վրայ *hommage*⁶⁷ Նիպերկին եւ ուղարկէք միայն այն աշխատութիւնները, որոնք անվերադարձ նուէր են նրան:

Իմ հայեցակէտս Նոբելեան գրական մրցանակի մասին ես արտայայտած եմ *Արեւմուտքի* (NN 86 եւ 87) յօդուածում⁶⁸ եւ գտնում եմ հասունացած արդէն, թէ հայ նորագոյն գրականութիւնը եւ նրա ներկայացուցիչը բարոյական իրաւունք ունեն այդ Նոբելեան մրցանակի վրայ: Որքա՞ն պիտի դիրացնէր մեզ հետաքրքրող խնդրի լուծմանը, եթէ յաջողուէր ծրագրուած թէլաստիկանը ի պատիւ շուէտ-սքանտիկաւ մտաւորականների!

Իմ յօդուածս գրուած էր եւ ուղարկուած գրեթէ երեք ամիս առաջ, յուսալով թէ նա կը տպագրուէր այն օրերին *Արեւմուտքում*, երբ Փարիզում ժողովուրդած էին այստեղի գիտնականները Արեւելագետների ու Լեզուագետների Համագումարների առթիւ, եւ ես ենթադրում էի թէ անպայման տեղի պիտի ունենար Չեր ընդունելութիւն-հաւաքոյթը ի պատիւ սքանտիկաւ հիւրերի: Թում էր ինձ, թէ իմ յօդուածս առիթ պիտի տար ու դիրացնէր արժարժեցնելու մասնաւոր գոյցներում մրցանակաբաշխութեան եւ հայ գրականութեան «փոխյարաբերութեան» հեռանկարները: *Արեւմուտքը* իր ժամանակին չտպագրեց, յետոյ նա մի ամբողջ ամիս դադար յայտարարեց եւ միայն այժմս է լոյս աշխարհ տեսնում.՝ սոսկալի սրբագրութեամբ (միթէ սրբագրիչների այդպիսի սով է, որ այսքան խայտառակ կերպով են լոյս տեսնում մեր պարբերականները) եւ նոյնիսկ անհասկանալի դարձնող բառերի աղաւաղումով: Ի միջի այլոց, ես գրած էի իմ մի յօդուածում Նորայր Բիզանդացու մասին՝ «նա խուլ էր իր սրտին մօտ ընկերոջ հրաւերին ես», տպագրուել է «նա *խոզ* էր» եւ այլն: Խմբագիրը իրան հաշիւ իսկ չէ տուել հասկանալու թէ ոչ միայն ես ինձ չէի կարող թոյլ տալ մի նման արտայայտութիւն Նորայրի հանդէպ.՝ այլ որ եթէ իսկ «թոյլատրած» լինէի ինձ՝ նրա պարտքն էր ուղղել այդ անտեղի ու յիմար կոպտութիւնը:

Մակայն ես հեռացայ խնդրից:

Կրկին անգամ խնդրում եմ ներք իմ ակամայ ուշ պատասխանելուս:

Խորին յարգանքով, Չերդ՝ Ս. Լօրէլլի

20.IX.1948

Ռուսալա

Մեծարգոյ պ. Ա. Չօպանեան
9 rue Say, Paris 9e.

Միրելի Վարպետ.

Սուսցած եմ այս երկու-երեք օրուան ընթացքում Ձեր նամակը եւ հետեւեալ հրատարակութիւնները –

1. Ա. Չօպանեան – *Պարկերներ*
2. Ա. Չօպանեան – *Կեանք եւ երազ* – երկու ամորդջական ժողովածու⁶⁶
3. Archag Tchobanian - *Poèmes*, - Mercure de Franceի հրատարակութիւնը⁷⁰
4. *Festival de Poesie et de Musique Arméniennes*, Paris, 1945.
5. J. Sevadjian - *Archag Tchobanian*⁷¹
6. Գեղամ Ֆեներճեան – *Արշակ Չօպանեան*⁷²
7. Յովհաննէս Յովհաննիսեանի մատենախօսականը (ձեռագիր):

Համաձայն Ձեր կարգադրութեան՝ վերադարձնում եմ ներկայ նամակիս հետ Յովհաննէս Յովհաննէսեանի գրախօսականը եւ առաջին փոստով (imprimés) Sevadjianի եւ Ֆեներճեանի աշխատութիւնները: Յովհաննէս Յովհաննէսեանի մեծութեան եւ նրբութեան պոետի գնահատականը շատ խոշոր պատիւ էր մի սկսնակ բանաստեղծի համար եւ Դուք իրաւունք ունէք պահել այն Ձեր քղերում որպէս reliquium⁷³:

Հայ նորագոյն գրականութեան հարիւրամեակը տօնուեց այս տարի: Մեր լեզուի եւ նորագոյն գրականութեան այդ հարիւրամեայ կերտումին Դուք արքի կերպով մասնակցել էք 58 տարի, դառնալով մեր արդի գրականութեան՝ ինչպէս պատկերաւոր կերպով ասում է մեր ժողովուրդը՝ *կոճղերից* մէկը: Յաւալի էր ինձ համար, կարդալ Ձեր նամակում ակնարկներ՝ Ձեր հանդէպ իբր ցուցադրած անարդարամտութեան՝ իմ «Նորելեան գրական մրցանակը եւ հայ մտաւորականութիւնը»⁷⁴ յօդուածում ([որ լոյս էր տեսել] *Պայքար* եւ *Արեւմուտք* [քերթերում]), մանաւանդ որ ես Ձեր մասին որպէս գրական դէմքի, բնաւ չեմ խօսած այնտեղ:

«... Ատիկա (Ձեր հասարակական գործունէութեան նուիրուելը) պատճառ մըն է, որպէսզի իմ *հայրենակիցներիցս ունանք* մոռնան ինչ որ ես ըրած եմ իբր գրագետ, իբր գրական քննադատ, եւ մասնաւորապէս բանաստեղծ...»

Ապա –

«... չէի երեւակայեր որ մեր ազգին մէջ *պիտի գտնուէին մրաւորակաւներ* որ զիս պիտի այս ձեռով պատժէին իմ գոհաբերութեանս համար...»

Ես նորից կարդացի յօդուածս, տեսնելու թէ ի՞նչ էի գրած Ձեր վերաբերմամբ, որպէս գրական դէմքի, որ կարող էր Ձեզ յուզել կամ վշտացնել ամենափոքրիկ չափով: Հաւատացէք, թէ ոչ մի տող, ոչ մի բառ չգտայ: Կրկնում եմ, ես չեմ խօսած Ձեր մասին, ինչպէս եւ մեր այլ կոճղերի մասին: Մեր միջնադարեան քնարերգութեան արժէքը ընդգծելու՝ միջազգային միջնադարեան բանաստեղ-

ծութեան մէջ, եւ որպէս լուսաբանութիւն բերել էի փրոֆ. Նիպերկի սքանչացումի փաստը Չեր Հայրենեան Բուրասարանը ժողովածուով: Մեր գրողների տաղանդաւորութիւնը շեշտելու համար, եւ թուել էի այս վերջին կէս դարուան-ինչ գոյութիւն ունեն Նորելեան մրցանակները (1896 թուից) – մեր խոշոր բանաստեղծների ու արձակագիրների անունները.– սակայն բոլոր անունները «Չեւ մեռի. արի սիրեմ» պանթոնից: Եւ ոչ մի կենդանի բանաստեղծի կամ արշակագրի անուն չեմ փութել յօդուածումս, գիտակցաբար, թէն գիտեմ որ յօդուածումս յիշուած ռուսահայ փլէյստի⁷⁵ անբաժան մասն է կազմում Աւետիք Խահակեանը, թէն գիտեմ որ տաճկահայ յիշածս փլէյստի նոյնչափ անբաժան մասն է կազմում (եւ առաւելագոյնը ժամանակագրականապէս) Արշակ Չօպանեանը, թէն գիտեմ որ կայ նաեւ ռուսահայ-տաճկահայ «գրական metis»⁷⁶: Լեւոն Շանթը: Երեք դէմքեր, որոնք արդէն մտած են մեր նորագոյն գրականութեան վերջին 50ամեակի պատմութեան մէջ, եւ Դուք ինձ մեղադրում էք ոչ միայն անարդարամտութեան մէջ դէպի Չեւ.– մեր երեք կոնդէրից մէկը, այլեւ տգիտութեան մէջ հայոց նորագոյն գրականութեան մասին խօսելիս:

Եւ ինձ թոյլ եմ տալիս մի անտեղի լիրիքական շեղում, գուցէ ներելի մի մասնաւոր նամակում, մանաւանդ համեստաբար գրուած մեր արդի գրականութեան կոնդէրից մէկին.– որ՝ թէն եւ արտասահմանեան եւ ռուսական համալսարանների սան եմ եղած⁷⁷, սակայն իմ հիմնական դասարիարակութիւն-կրթութիւնս հայկական է եղած, բացառիկ մաքուր հայկական, եւ իմ օրօրոցի երգը եղել է մեր տանը շարունակ կրկնուող Խաչատուր Աբովեանի խօսքերը – «տասն լեզու իմացիր, բայց ամենից արեւի քո մայրենի լեզուն սիրիր»: Թէն սքանտիմանեան սառնամանիքներում եւ սկսել եմ խառնել մեր հին ու նոր ուղղագրութիւնները.– սակայն օրօրոցիս երգը ընդմիջու անտոաց է եւ կը մնայ մինչեւ վերջին շունչս: Եւ գրիչ շարժելու օրումսից եւ ճանաչուել եմ մեր գրական մշակների բարեկամ: Որքան եմ եւ պաշտպանել խեղճ Եղիշէին (Չարենցին), որը խեղդում էր բոճապետական մթնոլորտում! Դեռ սոսկալի 1926/27թ., երբ Աւետիք Խահակեանը դաշնակցական էր ու գտնում էր սփիւռքում.– իսկ եւ իմ հայրենի Կովկասում վերջին մարդը չէի.– եւ իմ խմբագրութեամբ ու իմ յառաջաբանով (աղաւաղուած սոսկալի գրաքննիչներից) լոյս ընծայեցի նրա երկերի ժողովածուն (մի հատոր) Թիֆլիսում.– արժանանալով յանդիմանութեան այդ հրատարակութեան համար: Չեմ ուզում երկարել այս խնդիրների վրայ եւ եթէ ինձ թոյլ տուի վերի անձնական տողերը, ոչ իմ «Նորելեան գրական մրցանակը եւ հայ գրականութիւնը» յօդուածիս համար, եւ ոչ էլ ընդհանրապէս: Եւ գիտակցում եմ, որ չեմ մեղանշած Չեր դէմ, որպէս գրական դէմքի, չեմ մեղանշած անարդարամտութեամբ դէպի իմ արդի մայրենի գրականութիւնը, երազելով նրան պսակուած տեսնել միջազգային մրցանակներով:

Եւ միանգամայն անկախ մարդ եմ եւ ոչ ոքից ոչ մի ակնկալութիւն չունեմ: Եւ ուզում եմ ամենամանջահախնդիր կերպով՝ իմ ուժերիս չափ եւ թէն հեռու հայրենիքիցս՝ օգտակար լինել մերոնց, ծառայել հայ ժողովրդի շահերին: Մինչեւ Երոսպայի վերածնունդ արեւակներից, դեռ շատ ժամանակ կ'անցնի.– եթէ անգամ լաւատես լինենք, թէ երրորդ համաշխարհային պատերազմը կարելի չէ ու խաղաղութիւնը ապահովուած է մարդկութեանը, մի քանի տասնեակ

տարիների ընթացքում գոնե՝ Շուեռիան, իրան հետեւող Նորվեժի ու Տանի-մարքի հետ, արթի նկատելի դեր ունի միջազգային քաղաքական-կուլտուրական կեանքում։ Երկու համաշխարհային պատերազմները ւաւերեցին ու սնանկացրին միւս երկրները, իսկ Շուեռիան՝ հարստացրին ու կուլտուրապէս չափազանց բարձրացրին այս երկիրը։ Ի նկատի ունենալով այդ պարագան, ես՝ այս երկու անցած տարիները՝ ամեն կերպ աշխատեցի Չեզ – փարիզեան մտաւորականութեան ղեկավար շերտը – կապել Շուեռիայի մտաւորականութեան ղեկավար շերտի հետ։ Չեր կողմից միայն անտարբերութեան եւ անփութութեան հանդիպեցի։ Եւ համոզուեցի, թէ՛ *Դուք չէք հեկարաբարում Շուեռիայով*, թէ՛ն գիտակցում էի, թէ՛ այս մարդիկ ու այս երկիրը հայութեան հարկատր եւ օգտակար են լինելու, եւ Չեզ պէտք էր այլ վերաբերմունք ցուցադրել դէպի շուեռ մտաւորականութիւնը՝ քան ցուցադրում էիք։

Ես խնդրել էի անպայման շուեռ–սքանտինաւական մտաւորականների *ընդունելութիւն*՝ հայ–շուեռական հանդիպում կազմակերպել, առիթ ունենալով 250ամեայ հայագիտութիւնը Շուեռիայում, եւ օգտուել այստեղի մտաւորականների ժամանումից Փարիզ՝ Լեզուագետների ու Արեւելագետների Համագումարներին։

Ես խնդրել էի ստեղծել շուեռ–հայկական խմբագրական–գրական յանձնաժողով Նորայր Բիզանդացիի անտիպ ձեռագրերի տպագրութեան համար՝ պատրաստելու մի երկու հատոր։ Գրել էի, թէ Շուեռիայի կողմից մուծեցէք փրոֆ. Նիպերկին, փրոֆ. Ֆրիսքին (Աօքսբորկի [համալսարան]) եւ դոցենտ (շարժէ տը բուր) Վիքանտերին⁷⁸ (Լուսն[ի համալսարան])։ – երեք գիտնականներ՝ որոնք հետաքրքրում են հայագիտութեամբ։ Չեր կողմից *Դուք*, Արտաւազդ եպ[իսկոպոսը] եւ էլի ում կը ցանկայիք այդտեղ։ Նախագահ՝ փրոֆ. Նիպերկ։ Պատրաստել Նորայրի երկերը տպագրութեան, չէր նշանակում 1948 եւ 1949[ին դրանք] տպարան ուղարկել, այլ շուեռ–հայկական գրական ձեռագրութեան հիմք դնել։

Ես խնդրել էի Արտաւազդ եպ[իսկոպոսից] նուիրել՝ որեւէ հայկական հաստատութեան կողմից կամ թէկուզ անձնապէս (չնչին մի բան է)՝ հայ–ֆրանսերէն գոյութիւն ունեցող լատագոյն բառարանը (կամ հայ–գերմաներէն, կամ հայ–անգլերէն) փրոֆ. Նիպերկին՝ վերջինիս հետ հանդիպումին Փարիզում։ Նա ունի *Հայկագետներ*⁷⁹ եւ երագում է մի այդպիսի բառարանի մասին։

Ես կարծում էի, թէ՛ Արտաւազդ Արքեպ[իսկոպոսը] կը գտներ համագումարին փրոֆ. Նիպերկին, կը նստեցներ *աւրօ*⁸⁰, ցոյց կը տար Փարիզի հայոց եկեղեցին, կը հրաւիրէր իր տուն, կը հիւրասիրէր մի նախաճաշով կամ թէյով, կը գրուցէին մտերմաբար ու կը բարեկամանային, կը գրաւէր հայութեանը մի մեծ շուեռ դէմք, չափազանց ազդեցիկ թէ ժողովրդի մէջ, թէ մտաւորականութեան եւ թէ պալատական շրջանում։

Ոչ մի բան չարուեց, ու գեղեցիկ առիթը թոցրինք, երբ Փարիզի հայ մտաւորականութիւնը պիտի ապացուցէր իր երախտագիտութիւնը դէպի Շուեռիայի 250ամեայ հայագիտական հետաքրքրասիրութիւնը, իսկ *Դուք անչնապէս պիտի փայլէիք Չեր գրական մեծ էրիպիսիոնով*⁸¹, յարգուէիք սրանց կողմից, բոլոր թիրթիրում կը խօսուէր Չեր մասին Շուեռիայում եւ երբ հարկ լինէր՝

չուհրացի մրտաորակակները մեզ հայուքեանը, վարահութեամբ ու սիրով կ'արչագանգէին, մանաւանդ երբ Չեր անուան հետ կ'ունենային գործ: Խնդրում են ին գրածները շնորհունել որպէս «կշտամբանք» կամ «վիրաւորանք»: Չեզ կամ Արտաւազդ Արքեպիսկոպոսիին: Ես բնաւ խժքժանքներով զբաղուելու ախորժակ չունեմ եւ ոչ էլ աշխարհիս ոչ մի մարդու հետ անձնական լուացք լուանալու: Պարզապէս *անհեռաւորութիւն* մեր կողմից ու *սխալմունք, վրիպում* էր: Սիս այսօր դրում է Արշակ Չօպանեանի թեկնածութեան հարցը Նոր[ելեան] գրակ[ան] մրցանակի համար եւ Շուեախայում ոչ որ չգիտէ նրա մասին, միայն՝ փրոֆ. Նիպերկը եւ այն էլ նրա *Հայրեններու Բուրասարանը* մի հատորը գիտէ: Այսօր ուզում են դնել Գարեգին Յովսէփեանի⁸² թեկնածութիւնը խաղաղութեան Նորելեան մրցանակի համար,– եւ Փարիզի հայութիւնը գէթ հայոց եկեղեցիին ճարտարապետութիւնը չցոյց տուին տեր–բարայի տղին՝ փրոֆ. Նիպերկին, որը չափազանց հետաքրքրում է կրօնների պատմութեամբ ու եկեղեցիների ճարտարապետութեան պատմութեամբ (նա շատ սիրել է Արմենակ Մաքրզեանի աշխատածութիւնը, հրատարակուած ֆրանսերէն Մելգոնեան Յանձնաժողովի կողմից⁸³): Ի հարկէ, ոչ Արշակ Չօպանեանին եւ ոչ էլ Գարեգին Յովսէփեանին անձնապէս պէտք չեն մրցանակների փայլը,– բայց նրանց հետ կապուած նիւթական միջոցները հնարաւորութիւն կը տային Չեզ նուիրուելու ամբողջապէս Չեր գրական տպագիր ու ցիրուցան եւ անտիպ աշխատութիւնները կարգի բերելուն եւ թողնել[ու] կանոնադրուած մեր ապագայ սերնդին, իսկ Յովսէփեան կաթ[ողիկոս]ին՝ փոխանակ դոնէ–դուռ մուրալու՝ հնարաւորութիւն ստանալու Անթիլիասի Կաթողիկոսարանում գիտական մի օճախ ստեղծել, առանց մուրացկանութեան եւ առանց ժամանակ կորցնելու:

Միւրեկի վարպետ, այնուամենայնիւ պէտք է անել հնարաւորը՝ մի կողմից որոշ չափով *ուղղելու սխալները*, միւս կողմից որոշ *նահապարհաւորակակ անհրաժեշտ աշխատանքները կատարելու*, եւ վերջապէս փորձելու Նորելեան գրական մրցանակաբաշխութեան *դասինն անաճելու*,– հայութեան համար յանձին նրա կոճղերից մէկին,– Չեզ:

Ես մի քանի օրից յետոյ նորից կը գրեմ Չեզ յատկապէս այդ հարցերի մասին եւ ինչպէս պէտք է մօտենալ խնդրին, որպէսզի որոշ *շանս–յոյս* ունենա[նք] թեկնածուական ուշադրութեան Սվենսթա Աքատեմիէն ընտրող հաստատութեան մէջ: Թոյլ տուէք ինձ մի քանի օր կշռել խնդրի բոլոր կողմերը, նախքան Չեզ նորից գրելը:

Միշտ խորին յարգանքներով, Չեր՝ Ս. Լօրէլի:

25.IX.1848, Ուփսալա,
Իտունակարան 6

3. Գր.– Լիբանանից եկած էին էքսքուրսիոնիսթներ⁸⁴ Շուեախա, նրանց առաջին պահանջն էր եղել իրենց ներկայացնելու պատիւն անել եւ տանել յայտնի արարագէտ պարոն Նիպերկին: Այս մի քանի օր առաջ էր եւ մարդիկ Մթօքիոյմից Ուփսալա եկան այդ պատուին արժանանալու:

Մի ամիս առաջ Կ. Պոլսից եկած էր մի թուրք ուսանողուի, ճամբորդող Երոպայում: Նա յատկապէս ցանկութիւն էր յայտնել տեսնել յայտնի արեւելա-

գետ - *Le Monde Oriental*ի գիտնական խմբագիր հրատարակչին (1926 թուից):

Այսպիսի փաստերի մասին գրում է մամուլում, շոյում է սրանց ազգային ինքնասիրտինը եւ բարձրացնում Լիբանանի եւ բարբարոս Թիւրքիայի վարկը, թէւ փրոֆ. Նիպերկը շատ լաւ գիտէ, թէ ինչ է Թիւրքիան, - եւ հայերիս նրակը:

Է.

15.XI.1948, Ուփսալա,
Խոտնակաթան 6

Մեծարգոյ պ. Ա. Չօպանեան
9 rue Say, Paris 9e.

Սիրելի Վարպետ,

Ստացած եմ Ձեր նամակը, որի մէջ հաղորդում էք, թէ ֆրանսիացի Չեր բարեկամ գրողները, մասնատրապէս René Grousset⁸⁵, պատրաստ են գրել Նորբելեան գրական մրցանակը բաշխող Academie de Suedehin եւ վերջինիս կարեւոր անդամներին (որպէսզի) հերթական գրական մրցանակը բաշխուի հայ գրականութեան ներկայացուցչին, - այսինքն Ձեզ: Դուք խնդրում էք ինձ հաղորդել Ձեզ կարեւոր շուէտ ակադեմիկոսների անունները ու հասցէները, մասնատրապէս փրոֆ. Հ.Ս. Նիպերկի: Սիրով կը հաղորդեմ Ձեզ ցանկացածդ տեղեկութիւնները: Բայց կանխապէս պէտք է պարզել մի փոքրիկ հարց:

Ինչպէս Ձեզ յայտնի է, 1948 թուի գրական մրցանակը մօտեքս միայն բաշխուել է արդէն անգլիացի գրող՝ Էլիզբէին⁸⁶: Դեկտեմբերին Նորբելեան մրցանակների արժանացածները պիտի ժողովուեն Սթոքհոլմ՝ Շուետիայի քազաւորի շնորհատրութիւնը լսելու եւ նրա ձեռից ստանալու մրցանակի գումարի չէքը: Նոյեմբեր, Դեկտեմբեր, Յունուար ամիսները կ'անցնեն տօնակատարութեան մէջ եւ մրցանակատրների դասախօսութիւնների, որոնք արւում են Սթոքհոլմում, Ուփսալայում, Լունտում, Կէօքրպորկում բարձրագոյն դպրոցների շրջաններում: Ուրեմն ըստ իմ կարծիքի, մինչեւ եկող տարուայ Փետրուար-Մարտ ամիսը, աննպատակայարմար կը լինէր յարուցել որեւէ խնդիր 1949 թուի Նորբելեան գրական մրցանակի մասին: Կը մոռացուի 1948 թուի Նորբելեան մրցանակատրների տօնատրութեան մէջ եւ նոյնիսկ կը համարուի անժամանակ (ժամանակից առաջ): Եթէ աքառեմիկոս René Groussetն գրէր Մարտ-Ապրիլ ամսին Չեր մասին փրոֆ. Նիպերկին շատ աւելի լաւ կը լինէր, քան այժմս: Ի միջի այլոց շտապում եմ պատասխանել Ձեր մի այլ հարցին, թէ փրոֆ. Նիպերկին ոչ մի բացատրութիւն տալու կարիք չկայ «ջուրն ընկած ընդունելութեան» առթիւ, որովհետեւ ես նրան ծպուտ իսկ ասած չկամ այդ մասին: Ուրեմն այդ կողմից կարելի է հանգիստ լինել: Գուցէ թէ այս ամառ այդ հայագէտ փրոֆեսորը հանդիպի Չեր կողմերը եւ Նուպարեան Մատենադարանում առիթ ունենար պատուոյ թէյասեղանի գաղափարը իրականացնել: Տեսնեք ինչ կը քերի ամառը:

Չգիտեմ Դուք համաձա՞յն էք իմ արտայայտածս կարծիքի հետ, թէ

գրութիւնները Չեր մասին՝ հարկաւոր անձանց՝ պէտք է յետաձգել մինչեւ զարուն եւ այժմ վաղաժամ է? Եթէ համաձայն չէք իմ արտայայտածս մտքի հետ, ապա ես անմիջապէս կը հաղորդեմ Չեզ հետաքրքրող տեղեկութիւնները: Այժմէն իսկ գրում եմ փրոֆ. Նիպերկի հասցէն՝ Herr Prof. H.S. Nyberg (անունը կրկնակի՝ Henrik Samuel, շուետական քրանսքրիփսիոն⁸⁷, գործածականը գերմաներէնում առաջինն է՝ Henrik), Uppsala, Nedre Slottsgatan (Անրոցիտակփողոց) 10.

Չեզ ինձ ուղարկած *Poèmes* (Mercure de Franceի հրատարակութիւնը) պահում եմ Չեր տրամադրութեան տակ եւ կը յանձնեմ այն շուետ դէմքի(ն), որին կը ցանկաք նուիրել:

Առայժմս բաւականանում եմ այսքանով, սպասելով իմանալ Չեր որոշումը:

Խորին յարգանքով, Չեր՝ Ս. Լօրէլլի

Ը.

Մեծարգոյ պ. Արշակ Զօպանեան, Փարիզ
Սիրելի Վարպետ.

Մօտերս կարդացի մի մամուլում Չեր [յ]առաջաբանը Կոմիտաս վարդապետի *Հայ գեղոյկ երաժշտութիւնը*⁸⁸ ուսումնասիրութեան մասին (Փարիզ, 1938թ.),- մի յառաջաբան՝ որի մէջ տուած էք մեր մեծ երաժշտագետի գործունեութեան ու արժեքի ճիշդ գնահատականը:

Համարձակում եմ խնդրել Չեզնից, եթէ միմիայն կարելի է ի հարկէ, մի օրով ուղարկել ինձ այդ *Հայ գեղոյկ երաժշտութիւնը*, որը կարդալուց յետոյ՝ *նոյն օրը* պատուիրեալ փոստով կը վերադարձնեմ Չեզ անհուն շնորհակալութեամբ:

Խնդրեմ ներողամիտ լինել, եթէ հետաւոր ու հայութիւնից կտրուած Սքանտինաիայից անհանգստացնում եմ Չեզ մի նման խնդրանքով:

Խորին յարգանքով՝ Ս. Լօրէլլի

29.X.1950,

Uppsala,

Idunagatan 6.

Թ.

Մեծարգոյ պ. Ա. Զօպանեան
9 rue Say, Paris 9e.

Սիրելի Վարպետ,

Երկու օր առաջ ստացայ Չեր սիրալիր նամակը, իսկ այսօր հատորիկները,- մէկը՝ Կոմիտասինը Չեր գեղեցիկ ու անաչառ յառաջաբանով, միւսը՝ Չեր 65ամեայ յորելեանի մասին⁸⁹: Թոյլ տուէք իմ խորին շնորհակալութիւններս

մատուցել Չեզ՝ այդքան բարութեան համար:

Այն՝ ինչ արուած է Չեզ համար մեր հասարակութեան կողմից Չեր ներկայ թէ անցած յոբելեաններին ընդգծելու մեր բոլորիս երախտագիտութիւնը – քիչ է եւ Դուք արժանի էք շատ ատելիին: Բայց ես մտադիր եմ հրապարակով, մեր մամուլի էջերից, իմ անկեղծ զգացմունքներս միացնել մեր՝ հասարակութեան լաւագոյն բարեմաղթութիւններին, ուստի կը ներէք ինձ եթէ այստեղ գոհանամ միայն վերի մի քանի տողերով:

Խորին յարգանքով՝ Չեր՝ Ս. Լօրէլլի

8.XI.1950,

Ուփսալա

♣.

Մեծարգոյ պ. Ա. Չօպանեան

9 rue Say, Paris 9.

Միրելի Վարպետ.

Այս բույէիս ստացայ Չեր սիրալիր մամակը Մարտէյից, ուր կը գտնուիք *Նարեկացու* մասին դասախօսելու եւ Չեր սլատուին կազմակերպուած յոբելեանական տօնին անձամբ ներկայ լինելու:

Չափազանց զգացուած եմ Չեր ուշադրութեան համար եւ այժմէն իմ խորին շնորհակալութիւններս ընդունեցէք Չեր *Բանաստեղծութիւններ*⁹⁰ հատորին նուիրելուն համար, թէն գիրքը դեռեւս ինձ հասած չէ: Ծայրէ ի ծայր սիրով եւ ուշադրութեամբ կը կարդամ եւ, եթէ առիթ ներկայանայ, նոյնիսկ կը գրեմ իմ տպաւորութիւնների մասին:

Իմ յօդուածս «Արշակ Չօպանեան» խորագրով ես արդէն ճամբած եմ՝ մէկը՝ Նիւ Եորք *Երկրասարդ Հայաստան*ին, միւսը Գահիրէ *Արեւին*: Եւ երեւի արդէն լոյս են տեսել (ուղարկած էի par avion), քանի որ ունեմ պատասխան խմբագրից (Նիւ Եորքից) թէ ստացած է յօդուածս եւ ուղարկած տպարան: Կարդացա՞ծ էք ամերիկահայ թերթերում, թէ Ներսոյեան եպիսկոպոս]ի նախագահութեամբ *Դեկտեմբերին* տօնուելու է Նիւ Եորքում եւ այլ քաղաքներում Չեր յոբելեանը, եւ շտապեցի, որ իմ յօդուածս ասէր ամերիկահայ սերունդին ոչ միայն իմ անձնական խորին յարգանքս, այլ մանաւանդ մեր, «ոռուսահայութեանս» այն բարձր գնահատականի մասին, որ Դուք վայելած էք միշտ:

Մի շարք կոնկրետ փաստերով, կոյրին անգամ տեսանելի դարձնող, լուսարանած եմ Չեր ատելի քան կէտդարեան ղեկավար ու նշանաւոր դերը մեր գրականութեան մէջ:

Ես թոյլ եմ տուել ինձ յօդուածս վերջացնել մի բաղձանքով եւ կը ցանկայի, որ բոլորիս կողմից գիտակցուէր նոյնափսի անկեղծութեամբ:

Խորին յարգանքով, Չեր՝ Ս. Լօրէլլի

22.XI.1950,

Ուփսալա.

Idunagatan 6.

ԺԱ.

Մեծարգոյ պր. Ա. Զօպանեան
Փարիզ, 9 rue Say, 9.

Սիրելի Վարպետ.

Այս րոպէիս փոստը բերեց ինձ Ձեր նամակը Փարիզից եւ *Երկրասարդ Հայաստանը* Նիւ Եորքէն, վերջինիս մէջ (Նոյեմբեր 21 թիւը)՝ յօդուածս: Քանի որ գրում եք, թէ Դուք այդ հրատարակութիւնը չէք ստանում, եւ իսկոյն ուղարկում եմ ներփակ Ձեզ: *Արեւի*⁹¹ յօդուածս նոյնն է:

Կ'ուզէի պարզել մի փոքրիկ թիրիմացութիւն: Ձեր *Բանաստեղծութիւններ* հատորը ես ստացած չունէի՝ երբ գրում էի յօդուածս, որպէսզի նրանց մասին մի քանի խօսք ասէի: Հատորը Մարտէից ստացած եմ արեւի ուշ, - սովորական փոստով, իսկ օղային փոստը 3-4 օր արեւի արագ է սովորականից:

Ցանկանալով Ձեզ մի ամբողջ տասնեակ տարի նոյն առողջ ու կորովի կեանք, մնամ խորին յարգանքներովս, Ձեր՝ Ս. Լօրէլի.

4.XII. 1950, Ռոփսալա
Idunagatan 6.

ԺԲ.

13.VII.1952, Ռոփսալա.

Մեծարգոյ պր. Ա. Զօպանեան
Paris IXme, rue Say 9.

Սիրելի Վարպետ.

Կարդալով *Այսօրում*⁹² բժ. Պօղոս Բոլորեանի⁹³ *Mes souvenirs*⁹⁴ գրքոյկի մասին Ձեր յօդուածը, եւ հանդիպեցի Ձեր «բողոքին» մեր արդի գրականութեան նահապետին՝ *նահապետ* կոչելուն դէմ: Անշուշտ - ես եւս միանշանակ եմ Ձեր առաջ: Ձեր բողոքը ինձ յիշեցրեց մի այլ բողոք, որը ինձ թոյլ եմ տալիս վերյիշել այստեղ, մանաւանդ որ գործող անձինք Ձեզ քաջ ծանօթ ու նոյնիսկ բարեկամ անձնատրութիւններ են:

Կը յիշէք մեր տաղանդաւոր դերասան-րեժիսոր⁹⁵ Արմէն Արմէնեանը⁹⁶ եւ գուցէ թէ ծանօթ էք նաեւ նրա կնոջ հետ՝ տաղանդաւոր դերասանուհուն, Դուրեան-Արմէնեան⁹⁷, որը Թիֆլիսի մեր *Վսնքի բաղի* Դանդուրեան (այստեղից էլ *Դուրեան* անունը) յայտնի ընտանիքի աղջիկ է⁹⁸: 1924-25թթ. եւ Պարսի *Հայարութեան*⁹⁹ (Հայ Արուեստից Տան) հիմնադիրն ու նախագահն էի, եւ Արմէն Արմէնեանը մեր «Հայարտան» քատրոնի ռեժիսորը, իսկ նրա կինը՝ Դուրեան-Արմէնեան[ը] մեր քատրոնական խմբի առաջին դերասանուհին: Արմէնեան ընտանիքը արդէն ուներ 20 տարեկան աղջիկ, որը նոյնպէս բեմի դերասանուհի էր եւ ամուսնացած էր ու ուներ երկու տարեկան գաւակ էլ: Նոյնպէս ծնողների մնամ շնորհալի էր Արմէնի դուստրը: Մի անգամ, փորձերի ժամանակ, երբ փիլետում զբաղուած էին մայրն ու դուստրը, եւ Արմէն Արմէնեանն էլ ռեժիսոր.

Արմենեան–դուստրը մօտենում է մօրը եւ, շտապով քեմ դուրս գալուց առաջ, ձգում է մօրը իր փոքրիկը.–

– Մայրիկ, մայրիկ, իմ հերթն է, մի մտիկ արա սրան մինչեւ գամ...

Դուրեան–Արմենեան [մայրը] բարկութեամբ նկատում է ետեւից.

– Քեզ քանի՞ անգամ եմ ասել, որ ինձ ուրիշների ներկայութեամբ երբեք չասել «մայրիկ»...

Ուրիշների հետ միասին եւ քույրաներից հետեւում էի փորձերին: Այդ տարօրինակ տիպոլիկն¹⁰⁰ ու տեսարանին վկայ, մօտեցայ մեր բաղի մանկութիւնից ինձ ծանօթ աղջկան – դերասանուհի Դուրեան–Արմենեանին ու ծիծաղով ընկերաբար նկատեցի, մեր Թիֆլիսի բարբառով.–

– Քու աղջիկն է ու քեզ մայրիկ է ասում! Բա ի՞նչպէս կ'ուզես որ քեզ կանչի..

– «Տիկին Դուրեան–Արմենեան», «Տիկին»...! Էս հասակի ահագին աղջիկը, ձեռքին էլ մի «լակոտ», որ ինձ բոլորի առաջ բղաւում է «մայրիկ–մայրիկ», էլ ինչ պիտի մտածեն մարդիկ քու *Հայաստան* «փրիմա–տոննայի»¹⁰¹ մասին: Պիտի մտածեն թէ մի պառաւած կին եմ... *բարուշկա...* (ոռութեմ *մեծ մայր*, շատ գործածական մեզանում բառ) ա:

Եւ սկսեցիք բոլորս հրոհըռալ, սրամիտ Դուրեան–Արմենեան դերասանուհին էլ մեզ հետ, որը հազիւ թէ բոլորած լինէր 40 տարին, թեւ արդէն *մեծ մայր* էր: Նա շատ ջահել ամուսնացաւ Արմեն Արմենեանի հետ: Բայց Արմենեան–դուստր լեզուն չէր պտտում իր մօրը կանչել «տիկին Դուրեան–Արմենեան» կամ «տիկին»! կամ չէր տխրոգաստորում, կամ ասում էր «մայրիկ»:

Կարծում եմ, որ Չեր վերաբերմամբ էլ կրկնուելու է նոյն պատմութիւնը: Որքան էլ Դուր «դժգոհէք» ու «բողոքէք» թէ *Նահապետ* պատիւը չէր ուզում, թեւ այդ անունը ոչ ոքից այնքան իրաւամբ չէ նուաճուած՝ քան Չեր կողմից,– այնուամենայնիւ յարգանքը դէպի Չեր գրիչը թոյլ չի տալի(ս), որ մեր լեզուն պտտի այլ կերպ...

Ես փորձում եմ գրիչս հպատակեցնել Չեր ցանկութեան, եւ թոյլ տուէք Յուլիսի 15ին Չեր ծննդեան 80ամեակի առիթով ողջունել մեր գրականութեան միշտ երիտասարդ վարպետին:

Լաւագոյն զգացմունքներով եւ խորին յարգանքով, Չեր՝ Ս. Լօրէլի.

Uppsala, Fredsgatan 6.

13 Յուլիսի 1952.

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Նամակները պահուած են Զօպանեանի անձնական ֆոնդի I. բաժնում, քի 2866–2877:
2. Փեր Լազերկվիստ, 1891–1974, շուէր ակամատր գրող:
Լօրէլլին հայերէն է թարգմանել եւ հրատարակել Լազերկվիստի **Գանձը** վէպից մի ընդարձակ հատուած (տես՝ **Նոր գիր**, Նիւ Եորք, ԺԱ. տարի, 1949–1950, քի 4 (52), էջ 193–210): Եւ շուէր գրողն այս կապակցութեամբ Լօրէլլին է յղել մի շնորհակալական նամակ, որի բնագիրը հայերէն թարգմանութեան հետ, նոյնպէս տպագրուել է **Նոր գիր**ում (ԺԲ. տարի, 1950, քի 2 (46), էջ 122–123): Այդ նամակում Լազերկվիստը նշել է, որ իր նոր **Քարաքրաս** վէպում ինքը հանդէս է բերել հայ հերոսի՝ Սահակին: Լօրէլլին այդ վէպի՝ Սահակին վերաբերող հատուածները եւս թարգմանաբար հրատարակել է հայերէն (տես՝ **Նոր գիր**, ԺԳ. տարի, քի 2 (50), էջ 125–127):
3. 1946 թուականին հաստատուելով Եւրոպայում՝ Ս. Լօրէլլին ծանօթացել է Ռուսալայի համալսարանի գրադարանում (Քարոլինա Ռեդիլիա) պահուող Նորայր Բիզանդացու անձնական արխիւի մի մասին, այնուհետեւ Գեօրգիոսից բերել է տուել արխիւի մնացած մասը եւ դասատրել 44 թղթապանակներում (այս առթիւ տես նա «Նորայր Բիզանդացու անտիպ գրական ժառանգութիւնը» յօդուածը, **Էջմիածին**, 1949, Մարտ–Ապրիլ, էջ 64–68): Յետագայում Լօրէլլին Ամերիկահայ Ազգային Խորհրդի ծախսերով միկրոժապաւեմի է վերածել տուել Բիզանդացու արխիւի մի մասը եւ ուղարկել Երեւանի գիտական կենտրոններին:
4. Բարերարներ՝ Գրիգոր (1843–1920) եւ Կարապետ (1894–1934) Մելգոնեանների կտակի համաձայն գոյացել է Մելգոնեան Յանձնաժողովը, հրատարակելու համար հայագիտական արժեքատր հատորներ, ինչպէս՝ Աճառեանի **Հայերէն արմապական քառարանը**:
5. Խօսքը վերաբերում է Նիկողայոս Արունցի *Histoire d'Arménie* հատորին, որը լոյս է տեսել 1946 թուին:
6. Խօսքը վերաբերում է Սիրարփի Տեր Ներսէսեանի *Armenia and the Byzantine Empire*, հատորին, որը լոյս է տեսել 1945ին:
7. Նկատի ունի Արմենակ Սաքրզեանի *Pages d'art Arménien* ֆրանսերէն աշխատութիւնը, որը լոյս է տեսել Փարիզում, 1940ին:
8. **Հայրեններու բուրասպանը**, համախմբեց եւ լոյս ընծայեց քննական ուսումնասիրութեամբ մը եւ ծանօթագրութիւններով՝ Արշակ Զօպանեան, Փարիզ, 1940:
9. Թրգմ.՝ հաւաքածոյ:
10. Հենրիկ Սամուել Նիքերգ, 1889–1974, ակամատր շուէր արեւելագէտ, Ռուսալայի համալսարանի ուսուցչապետ, Եւրոպայի Գիտութիւնների Ակադեմիայի անդամ, բազմաթիւ աշխատութիւնների հեղինակ:
11. Թրգմ.՝ պարտաւորեցնող:
12. Նշուած ռուս բանաստեղծները հայ քերթութիւնից կատարած թարգմանութիւններով հանդէս են եկել Վալերի Բրիտովի կազմած **Հայ բանաստեղծութիւնը հնագոյն ժամանակներից մինչև մեր օրերը** ժողովածուում, որը լոյս է տեսել Մոսկուայում, 1916ին:
13. Արտաագղ արքեպիսկոպոս Միրմէեան (1889–1952), ձեռագրագէտ, պատմաբան, բանասէր, կեանքի վերջին տարիները ապրել է Փարիզում:
14. Թրգմ.՝ անակնկալ:
15. Թրգմ.՝ արեւելագէտների եւ լեզուաբանների:
16. Թրգմ.՝ տեսուչ:

17. Հեալմար (Եալմար) Ֆրիսը (1900–?), շուեդ լեզուաբան, Գեօքերրոզի համալսարանի ուսուցչապետ:
18. Նկատի ունի *Epitome Commentariorum Moysis Armeni De Origine Et Regibus Armenorum et Parthorum, Item Series Principum Iberiae Et Georgiae Cum Notis Et Observationibus Henrici Brenneri, Accessit Ejusdem Epistola ad plur reverend et celebrim. Doct. Ericum Benzellium de praesenti statu quarundam gentium Orientalium* հատորը, Ստոկհոլմ, 1723: Այն Մոպետ Խորենացու Հայոց պատմության համառոտության լատիներեն թարգմանությունն է:
19. Էալդ Լիդեն (1862–1939), շուեդ լեզուաբան–հայագետ, Գեօքերրոզի համալսարանի ուսուցչապետ:
20. Անտուան Մէյե (1866–1939), ֆրանսիացի լեզուաբան–հայագետ:
21. Հայագիտական ամբիոն Ուփսալայի համալսարանում երբեմն չի հիմնադրուել:
22. Նկատի ունի Արշակ Չոպանեանի *La Roseraie d'Arménie* եռսեսուր ժողովածուն, որի երեք հատորները լոյս են տեսել 1918, 1923 եւ 1929 թուականներին, Փարիզում:
23. Խօսքը Չոպանեանի «Արեւմտահայ լեզուի եւ գրականության ապագան» յօդուածի մասին է, *Անսահյոյ*, Փարիզ, 1947, քիւ 2, Յուլիս–Ռեկտեմբեր, էջ 1–6:
24. Թրգմ.՝ հրամանագիր:
25. Թրգմ.՝ տեղայնացուած հայրենասիրութիւն:
26. Թրգմ.՝ գլուխ գործոց:
27. Թրգմ.՝ զանգուած:
28. Նկատի ունի իր «Հայ հասարակական մտքի զարգացումը Խ. Արովեանից ու Մ. Նալբանդեանից մինչեւ Ստ. Շահումեան եւ Ս. Սպանդարեան» կիսատ մնացած աշխատութիւնը:
29. Թրգմ.՝ ծննդոց:
30. Թատերասրահ Թիֆլիսում, հիմնուած հասարակական–քառերական գործիչ Գալուստ Շերմազանեանի (1807–1891) կողմից, գործել է 1836–1865 թուականներին:
31. Արգար Յովհաննիսեան (1849–1904), հրապարակախօս, թարգմանիչ, *Արշազանք* պարբերականի հրատարակիչ:
32. Նկատի ունի Ղազարոս Աղայեանի *Ուսումն մայրենի լեզուի* դասագիրքը (Ա. Բ. Գ. Դ. տարիների համար), որոնցից առաջինը քառասուն տարուց աւելի (1875–1916) եղել է հայ դպրոցների ամենատարածուած այբբենարանը:
33. Թրգմ.՝ տանուտեր:
34. Արեւելագիտական Հանդէս, հրատարակուել է Ուփսալայում, 1906–1941:
35. Արեւելագիտական Հանդէս, հրատարակուել է Փարիզում, սկսած է 1822թ.ից:
36. Թրգմ.՝ ակնարկութիւն:
37. Ամենայն հաւանականութեամբ, Արշակ Չոպանեանը չի կատարել Լօրէլլիի խորհուրդը՝ նամակ գրել Լագերկվիստին, Չոպանեանի ֆունդում ոչ մի փաստաթուղթ չգտնուեց այդ կապակցութեամբ:
38. Թրգմ.՝ վիպագիր:
39. Թրգմ.՝ պատմութեամբագիր:
40. Աւգուստ Սքրինդերթ (1849–1912), շուեդ գրականութեան դասական:
41. Թրգմ.՝ հոգիներ ալեկոծող:
42. Նկատի ունի գերմանացի թարգմանիչ Հանս Բէթիեի *Die armenische nachtigall*, գիրքը, որը լոյս է տեսել Բերլինում, 1924ին:
43. Դժբախտաբար «մնացեալ երեք հատորները» չեն հրատարակուել, գեթ՝ *Roseraie* վերնագրով:
44. Նորայր Բիզանդացու արխիւը մինչեւ օրս պահում է Գեօքերրոզի համալսարանի գրադարանում: Նրա անտիպները Լօրէլլու ասած «մօտ տարիներին» չհրատա-

րակունցին, այլ միայն տասնամեակներ անց, Վիեննայի Մյսիքարեան միաբանության անդամ Հայր Մարտիրոս Մինասեանի աշխատասիրութեամբ՝ *Հանդէս ամսօրհար*ում եւ առանձին հատորներով:

45. Թրգմ.՝ նմուշ:
46. Կարապետ Բասմաջեան (1864–1942), բանասէր, պատմաբան, 1899–1908 թուականներին Փարիզում հրատարակել է *Բանասէր* հանդէսը:
47. Թրգմ.՝ բանաստեղծների խումբ:
48. Թրգմ.՝ առհաշի:
49. Գեորգ Արով (1897–1965), Նայիրի Չարեան (1900–1969), Վահրամ Ալազան (1903–1966), Ազատ Վշտունի (1894–1958)՝ խորհրդահայ բանաստեղծներ:
50. Թուարկուած են արեւելահայ մամուլի հինգ ականաոր խմբագիր-հրատարակիչները. Պետրոս Միմեռեան (1830–1911)՝ *Մեղու Հայաստանի* եւ *Արարար*, Գրիգոր Արծրունի (1845–1892)՝ *Մշակ*, Արգաթ Յովհաննիսեան (տես՝ ծանօթ թիւ 31), Սպանդար Սպանդարեան (1894–1922), *Նոր դար*, Աւետիք Արասխանեան (1857–1912)՝ *Մարմ*:
51. Նորայր Բիզանդացին *Քննասէր* խմորատիպ հանդէսը հրատարակել է 1887ին, Ստոկհոլմում, այն երկրորդ պրակից յետոյ՝ 1889ին, դադարել է:
52. Նկատի ունի երկրորդ կնոջը՝ հելսինկկի շուեդուի Եոթա Երզնկեան-Ֆյելին (ծն. 1913), որը մինչեւ օրս բնակուած է Ռուսալայում:
53. 1924 թուականին Նորայր Բիզանդացու դին Վենետիկից փոխադրուել է Ստոկհոլմ եւ քաղուել իր իսկ ձեռքով պատրաստուած գերեզմանում՝ Նուրրա Բեգրանին գերեզմանատանը, կնոջ՝ շուեդական արքունի լուսանկարիչ, ծագումով հրեուի Սելմա Եակոբսոն-Նորայրի (մահ. 1899) շիրիմի կողքին: Բիզանդացու կտակի համաձայն՝ իր դին Վենետիկից տարուել է չորս ճերմակազգեստ կոյսերի ուղեկցութեամբ:
54. Նորայր Բիզանդացի. *Բանագիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն*, Կոստանդնուպոլիս, 1884:
55. Գեորգ Բրանդէ (1842–1912), դանիացի գրաքննադատ, հրապարակախօս:
56. Թրգմ.՝ հմայել:
57. Ժան Պոլ Մարտրին (1905–1980)՝ Նորելեան մրցանակ շնորհուել է 1964 թուականին, որից նա հրաժարուել է:
58. Ժիլ Ռոմէնը (1885–1972) այդպէս էլ Նորելեան մրցանակ չի ստացել:
59. Անդրէ Ժիլ (1869–1951), ֆրանսիացի գրող, Նորելեան մրցանակի 1947 թուականի դափնեկիր:
60. Գաբրիէլ Միստրալ (1889–1957), չիլիացի բանաստեղծուի:
61. Նկատի ունի Արշակ Զօպանեանի *Les Trouveres Arméniens*, հատորը, որը լոյս է տեսել Փարիզում, 1906ին:
62. Թրգմ.՝ մամլոյ կցորդ:
63. Թրգմ.՝ դրախտ:
64. Թրգմ.՝ հնավաճար:
65. Թրգմ.՝ թղթակից:
66. Հանս Ծոզթ (1903–^o), նորվեգացի լեզուաբան-կովկասագետ, հայերէնի եւ վրացերէնի վերաբերեալ մի շարք աշխատութիւնների հեղինակ:
67. Թրգմ.՝ ի յարգանս:
68. Խօսքը վերաբերում է Ս. Լօրէլիի «Նորելեան գրական մրցանակը եւ հայ գրականութիւնը» վերնագրեալ յօդուածին, որը լոյս է տեսել Փարիզի *Արեւմուտք* շաբաթաթերթի յաջորդաբար 12 եւ 19 Սեպտեմբեր 1948 (Բ. տարի, թիւ 86 եւ 87) համարների մէջ:

69. Արշակ Չօպանեան, *Երկիրու ամրոցական ժողովածու, Պարկերներ*, Փարիզ, [1940*]: Արշակ Չօպանեան, *Կեանք եւ Երազ*, Փարիզ, 1945: Այժմ այս երկու գրքերը պահուում են Ուփսալայի համալսարանի ամբիոնական ինստիտուտի գրադարանում: *Կեանք եւ Երազ* գրքի վրայ Չօպանեանը հայերէն մակագրել է «Շուերացի մեծանուն գիտնական Հ. Ս. Նիպերկին յարգալիք նուէր. Ա. Չօպանեան, Փարիզ, 9 Դեկտ. 1948», իսկ *Պարկերներ* գրքի վրայ՝ «Սեծարգոյ Պարոն Հ. Ս. Նիպերկին սրտագին նուէր. Ա. Չօպանեան, Փարիզ, 9 Դեկտ., 1948»:
70. Archag Tchobanian, *Poèmes*, 1908:
71. Այս գիրքը Գեղամ Ֆեներճեանի՝ Ա. Չօպանեանի նուիրուած գրքի ֆրանսերէն քարգմանութիւնն է:
72. Գեղամ Ֆեներճեան, *Արշակ Չօպանեան. կենսագրական եւ մարտնչագրական նօթեր*, Փարիզ, 1938:
73. Թրգմ.՝ մասունք:
74. Պետր է լիմի «Նորելեան գրական մրցանակը եւ հայ գրականութիւնը»: Տես՝ ծանօթ. քի 68:
75. Թրգմ.՝ բանաստեղծների հոյլ:
76. Թրգմ.՝ խառնուրդ:
77. Ս. Լօրէլլին ուսանել է Ժնեւի, Փարիզի եւ Մոսկուայի համալսարաններում:
78. Լօրէլլին նախորդ նամակներից ոչ մէկում չի տուել արեւելագէտ՝ Լոււնդի եւ Ուփսալայի համալսարանների դասախօս, ուսուցչապետ Սթիգ Վիքանդերի անունը, որն ունեցել է հայագիտական հետաքրքրութիւններ:
79. Նկատի ունի *Նոր Բաղդիրք Հայկազեան Լեզուի* քառարանը, հտ. Ա. եւ Բ., Վենետիկ 1836, 1837:
80. Թրգմ.՝ ինքնաշարժ:
81. Թրգմ.՝ խորահմտութիւն:
82. Գարեգին Յովսէփեան (1867–1952), Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս, հայագէտ:
83. Տես՝ ծանօթ. քի 7:
84. Թրգմ.՝ արշատղ–գրօսաշրջիկներ:
85. Ուրնէ Գրուտէ (1885–1952), ֆրանսիացի արեւելագէտ, հայագէտ, Ֆրանսիական Ակադեմիայի անդամ 1946ից:
86. Թոմաս Սթերնս Էլիոթ (1888–1965), անգլոամերիկեան բանաստեղծ, քատերագիր, Նորելեան մրցանակի դափնեկիր (1948):
87. Թրգմ.՝ տառադարձութիւն:
88. Կոմիտաս, *Հայ գեղջուկ երաժշտութիւն*, յառաջաբան՝ Արշակ Չօպանեանի, Փարիզ, 1938:
89. Չօպանեանի 65ամեայ յոբելեանը Փարիզի մէջ տեղի է ունեցել 1950 Մայիս 14ին, Սորպոնի անֆիթատրոնում: Տես՝ Կարլէն Գալլաքեան, *Արշակ Չօպանեան*, Երեւան, 1987, էջ 474:
90. Խօսքը վերաբերում է Չօպանեանի *Բանաստեղծութիւններ* հատորին, որը լոյս է տեսել Փարիզում, 1949ին:
91. *Արեւի* մէջ սոյն յօդուածը լոյս է տեսել 27 Նոյեմբեր 1950ի թիւին մէջ, ԼԶ, տարի, քի 9718:
92. Ֆրանսահայ օրաթերք, լոյս է տեսել 1951–54:
93. Պօղոս (Պոլ) Բոլլիեան (1870–1949), ֆրանսահայ բժիշկ, հասարակական գործիչ:
94. Հատորը հաւանաբար լոյս է տեսել 1950ականների սկզբին:
95. Թրգմ.՝ բեմադրիչ:
96. Արմէն Արմէնեան (1871–1965), դերասան–բեմադրիչ:
97. Եկատերինա Դուրեան–Արմէնեան (1885–1971), դերասանուհի:

98. Արշակ Չօպանեանը 1927 թուականին Փարիզում դիտել է «Թայֆուն» ներկայացումը Եկատերինա Գուրեան-Արմենեանի գլխավոր դերակատարմամբ եւ գրել «Մեր արուեստագետները (Չարիֆեան-Արմենեան ներկայացման առթիւ)» յօդուածը (*Ալպագայ* շաբաթաթերթ, Փարիզ, 6, 13, 20, 27 Օգոստոս, 1927), որտեղ նրան համարել է «մեր թատերական արուեստի մեծագոյն ուժերէն մին»:
99. Պաքուի Հայարտունը հիմնուել է 1925 Մարտին: Տես՝ *Հայկական Սովետական Հանրագիտարան*, հտ. 6, Երևան 1980, էջ 154-155:
100. Թրգմ.՝ երկախօսութիւն:
101. Թրգմ.՝ թատերախմբի առաջին աստղ:

S. LORELLI'S LETTERS
TO ARSHAK CHOPANIAN
(Summary)

ARTZVI BAKHCHINIAN

These constitute twelve letters of the contemporary Armenian Scholar S. Lorelli (Suren Yerzenkian 1880-1963) written between June 9, 1948 and July 13, 1952. The letters, written from Sweden and addressed to the Armenian Scholar Arshak Chopanian, shed light on some biographic details of the Armenian philologist Norayr Biuzandatsi. They also reveal Lorelli's attempts to restore Swedish-Armenian cultural ties in collaboration with Armenian scholars of France and particularly with Chopanian. Discussions regarding failures on the part of both Lorelli and Chopanian to nominate Chopanian for the Nobel Prize in literature can be found here along with discussions of Lorelli's "procedural plan" which includes the translation of some of Chopanian's poetry by the renowned Swedish poet, Per Lagerqvist.